№ 68 կիրակի, 28 մարտի

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

կիրակի, 28 մարտի № 68

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228

Ա. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ յայտնում է ի տեղեկութիւն իր ծխախոտը սպառողների, որ ներկայումս ԱՋՈՂՎԵԼ Է, շնորհիւ նոր ստացված մեքենաների եւ պայմանաժամից զատ աշխատաւորների, ֆաբրիկայի ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՑՆԵԼ

ՄԻՆՉԵՒ 1.200,000 ՀԱՏԻ ՕՐԱԿԱՆ

Հետեւաբար, ֆաբրիկան լիակատար հնարաւորութիւն ունի այսուհետեւ պատուէրները կատարել ճշգրիտ և առանց յետաձգելու։

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ հարկաւոր է համարում ծխողների ուշադրութիւնը դարձնել հետեւեալ պապիրոսների վրա—

25 ՀԱՏԸ 10 ԿՈՊ. ԷԿՍՏՐԱ 15 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.

Այդ պապիրոսները աչքի են ընկնում իրանց ԳԵՐԱԶԱՆՑ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ հրապարակի վրա գտնվող բոլոր պապիրոսներից, որի համար ամենալաւ ԱՊԱՑՈՅՑ ԾԱՌԱՅՈՒՄ Է այդ պապիրոսների ԱՐԱԳ և ՄԵԾ ՉԱՓՈՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԾԽՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ։ 332. 3—3
(Ե.Հ.Կ.) (առ.)

Հայուհեաց Որբախնամ Ընկ. Վարչութիւնը
խոնարհաբար խնդրում է իր յարգելի անդամներին շնորհ բերել
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը կայանալու է մարտի 27-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը $11^1/_2$-ին (Вознесенская № 26). Պարապմունքի առարկաներն են՝ հաշուետուութիւն 1909 թւի, քննութիւն նախահաշւի 1910 թւի, ընտրութիւն վարչութեան և վերստուգիչ յանձնաժողովի անդամների, և քննութիւն որբանոցին վերաբերեալ մի քանի հարցերի։
(Հ.Կ.) (առ) 340. 2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Adresse Télégraphique SANITAS
Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ԿԱԿԱՕ Վան-Հուտէնի, Բլօօկէրի, բժ. Միխաէլիսի, Պրոմէտէուսի, Գլասմօնի, և ուրիշն.։
ՍՆՆԴԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ—Սուրճ «Здоровье», Բաժէնովի, Սոյոդովայի, «Սոյա»։ Սանատօգէն Բայէրի, Մէտադոին, Ֆօրտուզէ, Պէպսինի էսսենցիա, Բուլյօն Լիբիխի, Սոմատօզա, Գէմատօգէն Հօմմէլի։ Հերքուլէսի հատիկներ։ Նէստլէի. Մէլինս Ֆուդի և այլոց ալիւր և կաթ։
ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՆԻՆԵՐ—Սան-Ռաֆայէլ, Պէպսինային «Բուդօ», Ջերիօս, Դէկիլ, Բիւժօ։
(առ.) 354. 1—1

ԱՆԱԹԷՄԱ

Անաթէման՝ խեղճ ու անճար՝
Դուան էր բաղխում յաւերժ,
Նա հրեշտակին թող «ЗЕФИРЪ» տար,
—10 հ. 6 կ.
Տեսնէր նորից կը մերժի։
Թէկուզ «Казбекъ», «Браво», «Араксъ»
—10 հ. 3 կ.
Կամ «Деликатныя», «Марсъ» և «Другъ»
—10 հ. 5 կ.
Եւ, անպայման, քամուց արագ
Բաց կը լինի դուռը вдругъ.

Եթէ Ռօզան ծանօթ լինէր
Մեր «Восходъ»-ին հոտաւէտ,
—10 հ. 5 կ.
Նա չէր թողնի տունն աւեր
Ինքը փախչի ուրիշի հետ։

Այժմ Լէօնիդ Անդրէեվը
Շատ է ծխում մեր «Прима»-ն,
—25 հ. 30 կ.
Եւ գրելու նրա ձեռը
Կը լաւանայ անպայման։

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ „ԵՂԲ. ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐ“
(Ե. Հ. Կ.) (առ.) 155. 25—21

ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ
Վաղը՝ երկուշաբթի, մարտի 29-ին
Դերասանուհի Մ. Մ. ՍԱՓԱՐՕՎԱ-ԱԲԱՇԻՁԷՆ
կը ներկայացնէ
„ԽԱԹԱԲԱԼԱ“
Կոմէդիա 4 գործ. 5 պատկ., հեղ. Սունդուկեանի
Կը մասնակցեն՝ տ. տ. Ն. Գաբունիա-Ցագարելի, Մ. Մ. Սափարովա-Աբաշիձէ, Վ. Նէբիէրիձէ, պ. պ. Վ. Աբաշիձէ, Կ. Կիպիանի, Ա. Իմէդաշվիլի, Զ. Սափարով, և ուրիշներ։
Սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։
Տեղերի գները 25 կ.-ից մինչև 12 րուբլի։
Ռեժիսեոր՝ Վ. Աբաշիձէ
349. 1—1

Երկուշաբթի, մարտի 29-ին
Արտիստ. Ընկ. համերգային դահլիճում
Կայանալու է
ՄԵԼԵՔ-ՋԱՆԵԱՆԻ բենեֆիսին
ՀՐԱԺԵՇՏԻ ԵՒ ՎԵՐՋԻՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՄԵՐԳ
Տոմսակները կարելի է ստանալ թատրոնի կասսայում և «Южная молочная» սրճարանում։
Սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։
Կառավարիչ՝ Մ. Պօյաճեան (համարներ «Пале-Рояль» № 1, Դվօրցօվայա փող.)։
(Հ. Կ.) 348. 2—2

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, կիրակի, մարտի 28-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ՀԱՄԵՐԳ—1 բաժանմունքից, մասնակցութեամբ ռուսաց օպերայի երգիչ Ն. Դ. Ղուկասեանի, Սեմիգալովի և տ. Մ. Կոլոտովայի։
Համերգին աշակերտ-աշակերտուհիներին մուտքը թոյլատրվում է։
Հիւրերը՝ համաձայն ընդհանուր հիմունքների՝ վճարում են մուտքի համար 50 կոպ.։
Համերգի տոմսակները՝ 30—75 կ. արժողութեամբ՝ ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ $8^1/_2$-ին։
ԱԶԴ.—Երեքշաբթի, մարտի 30-ին, «Ընտանեկան Երեկոյթին», Ուսուցիչների Խորհրդի հրաւէրով Մոսկվայից եկած Վ. Ա. ՊՕՍՍԷՆ կը կարդայ դասախօսութիւն հետեւեալ թեմայով. «Սէրը Լ. Ն. Տօլստոյի գրուածքներում»։ Դասախօսութեանը կարող են ներկայ լինել աշակերտ-աշակերտուհիները։
(ա.) 355. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
Ժողովրդ. ներկայաց. կազմակերպող ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ.
Կիրակի, մարտի 28-ին
Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը
Մասնակցութեամբ դերասանների
կը ներկայացնէ Մոլիէրի
ՏԱՐՏԻՖ
Կոմեդիա 5 գործ. թարգմ. Խորէն-Ստեփանէի
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։
Տեղերի գները 50-ից մինչև 5 կոպէկ։
Ռեժիսեոր՝ ՍԵՒՈՒՆԵԱՆ
ԱԶԴ.—Ուրբաթ, ապրիլի 2-ին, հանդիսաւոր ներկայացում—սեկցիայի գործունէութեան տարեդարձի առիթով՝ «Խարդաւանք եւ սէր»—Շիլլերի։
Տոմսակները վաճառվում են։
(առ.) 352. 1—1

НАСТОЯЩЕЕ МЫЛО
КИЛЪ
Графская пристань
Севастополь

Պահանջեցէք անփոխարինելի ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ՍԱՊՈՆ Դ. Նէօֆէտի, Սեվաստոպոլում,
„ԿԻԼ“ ԿԱՆԱՉ ՓԱԹԵԹԻ ՄԷՋ։
Իսկական «Կիլ» սապոնը, շնորհիւ իր մէջ մեծ տոկոս պարունակող կիլի, նշանաւոր է իր փափկացնող ներգործութեամբ։ «Կիլ» սապոնը մաքրում է գլուխը փոշուց և ճարպից, դարձնելով մազերը մետաքսանման։ «Կիլ» սապոնը զանազանվում է իր չէզոքութեամբ, հետեւաբար առաջարկվում է երեխաներին լուացվելու համար։ «Կիլ» սապոնը անփոխարինելի է. ծովային լողարաններ ընդունելու ժամանակ։
Պահանջեցէք բոլոր դեղատներում և դեղավաճառանոցային խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими товарами, Թիֆլիսում։
(Կ.) (առ.) 301. 5—2

ԲԺԻՇԿ
Գ. Ց. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երեւանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե.Հ.Կ.) (առ.) 1045. 100—77

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԻՒԹԵՐ ԵՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Պետական Դուման չը զբաղվեց կովկասեան հարցերով ներկայ նստաշրջանում։

Շուտով նա կընդհատէ իր աշխատանքները Զատկի տօների պատճառով և ապա՝ երբ նորից կը սկսէ իր նիստերը՝ շատ քիչ ժամանակ կունենայ իր տրամադրութեան տակ օրէնսդրական խորհրդակցութիւնների և որոշումների համար և հազիւ թէ հասնի մեր երկրի խնդիրներին։

Ուրեմն մի տարով էլ յետաձգված է մեր երկրի ներքին խնդիրների քննութիւնը։

Իսկ խնդիրները էական են և կարեւոր։

Արդարև՝ կալուածատիրական հողերի վրա գտնվող գիւղացիների խնդիրը, որ արդէն բաւական մշակված և պարզված է, ընթացք չէ ստանում։

Տեղական ինքնավարութեան կամ զեմստվային հիմնարկութիւնների ներմուծման գործը պէտք է յետաձգվի, որովհետև նա մինչև այժմ դեռ վերջնականապէս խմբագրված չէ նաև կովկասեան բարձր ատեաններում։

Կրթական մի քանի ներմուծումներ, նրանց թւում և հայ-եկեղեցական դպրոցների կազմակերպութեան և կառավարելու խնդիրը դեռ չէ հասել Պետական Դումային և ուրեմն չէ էլ կարող քննութեան առարկայ դառնալ այնտեղ։

Այդպէս և ուրիշ խնդիրներ՝ օրինակ Ջրաբաշխական նոր օրէնսդրութեան, վարչական նոր գաւառաբաժանումների, դատաստանական բարեփոխութիւնների խնդիրները։ Նրանք դեռ չեն հասցված պարլամենտական ամբիոնի քննութեան։

Այդ խնդիրներից մի քանիսի վերաբերութեամբ կան ժողոված բաւական նիւթեր, որոնց հիման վրա Պետական Դուման իր ապագայ նիստերում կարող կը լինի հեղինակաւոր որոշում կայացնել, բայց կան և այնպիսի խնդիրներ, որոնք դեռ չեն ուսումնասիրված լիակատար կերպով և նրանց քննութեան համար պակասում են նիւթեր և ցուցումներ։

Այժմ, երբ կովկասեան խնդիրների մեծագոյն մասի քննութիւնը յետաձգվում է, ժամանակ և հնարաւորութիւն կայ լրացնելու պակասը և նորանոր նիւթերով, խորհրդածութիւններով ու լուսաբանութիւններով պարզել քննութեան սեղանի վրա դրված հարցերը։

Անտարակոյս՝ մեզանից իւրաքանչիւրը ցանկանում է, որ մեր երկրի բարեփոխութիւնների ներմուծման գործը օր առաջ կատարվի և հերթական դարձած օրէնսդրական նախագծերը շուտով քննութեան արժանանալով բարձրագոյն ատեանների կողմից՝ անցնեն իրանց գործադրութեան շրջանին։ Բայց՝ երբ հանգամանքների դասաւորութեան շնորհիւ յետաձգվել է նրանց քննութիւնը, պարտաւորական է մեզ համար, որ գոնէ աշխատենք այն ժամանակամիջոցում, որ մնացել է մինչև քննութեան օրերը, կատարենք լրացուցիչ ուսումնասիրութիւններ և նպաստենք, որ պետական բարձր ատեանների որոշումները լինեն սխալներից ազատ և համապատասխան մեր երկրի շահերի ճշգրիտ և արդարացի ըմբռնումին։

Եթէ մեր զանցառութիւնների շնորհիւ բարձր ատեանները աննպատակայարմար և սխալ որոշումներ կանեն, այն ժամանակ ուշ կը լինի նրանց ուղղելը, որովհետև մի անգամ ընդունվածը հեշտութեամբ և կարճ միջոցում չէ փոխվում, իսկ թոյլ տրված սխալը կանի իր կործանարար աւերները։

Դեռ ուշ չէ բոլորովին։ Թող երկրի հոգատարները լուրջ մտածեն այդ մասին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 26 մարտի

Համայնքների պալատ։ Պատասխանելով ուղղված հարցերին, Գրէյը յայտնեց, որ նրան յայտնի չէ, որ ռուս կառավարութիւնը երբևէ պարտաւորված լինէր յետ կանչել իր զօրքերը որոշ ժամանակում Պարսկաստանից, սակայն նա մտադրվել է յետ կանչել զօրքերին, հէնց որ կարգ ու կանոնը վերահաստատված կը լինի։ Հիւսիսային Պարսկաստանի մի քանի կէտերը ռուսաց զօրքերով ժամանակաւորապէս գրաւելու մէջ, այն էլ այնպիսի անհանգիստ ժամանակ, չը պէտք է որևէ ձեռնմխութիւն նկատել Պարսկաստանի նկատմամբ. համաձայն Թաւրիզի բրիտանական հիւպատոսի վերջին հաղորդագրութեան, եւրոպացիների մեծ մասը շատ անհանգիստ կը լինի, եթէ մինչև յեղափոխական շարժման վերջնական ճնշումը ռուսաց զօրքերը հեռանան Պարսկաստանից։

Այնուհետև Գրէյը յայտնեց, որ ոչ մի տեղեկութիւն չունի, թէ «Դէյչշէ բանկը» պարսից կառավարութեանը որևէ առաջարկութիւն արած լինի փոխառութեան մասին, նաև չէ կարող ասել, թէ ինչպիսի՞ դիրք կը բռնեն Ռուսաստանը և Անգլիան որևէ փոխառութեան վերաբերութեամբ, մինչև որ նրա պայմանները չը յայտնվեն։ Այն հարցին, թէ ռուսաց կառավարութիւնը պնդո՞ւմ է, արդեօք, որպէսզի Հիւսիսային Պարսկաստանում կազմակերպվեն ոստիկանական պահակախմբեր ռուս օֆիցերների հրամանատարութեան ներքոյ, որպիսի պահանջը, ինչպէս ասում են, պաշտպանութիւն է գտնում և Անգլիայից, Գրէյը պատասխանեց. «Ոչ մի բան չեմ կարող ասել փոխառութեան պայմանների մասին, քանի որ բանակցութիւններն այդ հարցի առիթով դեռ շարունակվում են»։ Պատասխանելով միւս հարցին, Գրէյը ասաց, որ այն ժամանակի երկարումը, որի ընթացքում Պարսկաստանը պարտաւորվել է Ռուսաստանին՝ ոչ մի երկաթուղի չը կառուցանել, լրանում է մարտի 26-ին։ Այն հարցին, թէ արդեօք Անգլիան դեռ իրաւունք ունի՞ երկաթուղագծեր անցկացնել Հարաւային Պարսկաստանում, թէ՞ կը միջամտէ, եթէ Պարսկաստանի ուրիշ որևէ մասում սկսվի ուրիշ պետութեան համար երկաթուղու կառուցում, Գրէյը պատասխանեց, որ անգլիական կառավարութիւնը Պարսկաստանի վերոյիշեալ պարտաւորութիւնը համարում է իր ուժը դեռ չը կորցրած, թէև այն շրջանը, որի մէջ Անգլիան կաշխատէ գործադրել նրան, կը գտնուի անգլօ-ռուսական համաձայնութեան յօդուածների համապատասխանութեան մէջ։

Համայնքների պալատը 334 ձայնով ընդդէմ 267-ի ընդունեց լորդերի veto-ի իրաւունքին վերաբերող բանաձևերից առաջինը, որի համաձայն վերին պալատի անդամները օրէնքով զրկվում են համայնքների պալատի ընդունած ֆինանսական օրինագծերը մերժելու կամ նրանց լրացնելու իրաւունքից։

Արտաքին գործերի մինիստրութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, իբր կայսրուհի Տախտուն դիմել է անգլիական դեսպանին, խնդրելով պաշտպանութիւն։

Անգլիական «Կէրնրօնա» նաւի վրա, որ 900 հայ, ռուս և չերնօրգօրցի գաղթականներով դիմում էր Պօրտլանդ, Լամանշի ջրանցքի մէջ հրդեհ է ծագում։ Ճանապարհորդներին ազատել են շվէդական շոգենաւերը և տարել են Դուվր։ Մօտ 400 մարդ Դուվրից փոխադրվել են արդէն Լօնդօն։(Հ. Գ.)

Կ. Պօլիս, 26 մարտի

Թագաւորը ներկայ եղաւ սէլամլըքին, դիտեց սուլթանի այցը մզկիթ, նախաճաշեց Մէրասիմ-Քեօշկում։

Թագաւորը Աթէնք կը մեկնէ մարտի 27-ին, առ. ժամը 10-ին, սուլթանական «Էրթօղրուլ» զբօսանաւով։ Ուղեկցելու է «Մեսուդիէ» զրահանաւը։

Մինիստրների խորհուրդը մերժեց ալբանական պատգամաւորի առաջարկութիւնը՝ Իփէկ հաշտարար պատգամաւորութիւն ուղարկելու մասին, և որոշեց ապստամբութեամբ բռնկված տեղերում յայտարարել պաշարողական դրութիւն. արդէն ուղարկված 16 բատալիօնների կազմը ուժեղացնելու նպատակով ուղարկել լրացուցիչ 18 բատալիօն առաջին զօրաբանակից, ընդհանուր հրամանատարութիւնը յանձնել 21-րդ հետևակ զօրագնդի հրամանատար Շէվքէթ-Տուրգուտ փաշային, զինուորական դատարանին յանձնել 1908 թ. յուլիսի 10-ից յետոյ կատարված յանցագործութիւնների քննութիւնը, զօրահրամանատարին յանձնարարել հարկերի ժողովումը, ազգաբնակութեան ցուցակագրութիւն կատարելը, հարկապաշխութեանը ենթակայ անշարժ կալքերի գնահատութիւնը։ Ներքին գործերի և զինուորական մինիստրները հաւատում են պատժիչ զօրամասի աջողութեանը և ապստամբութեան արագ ճնշմանը, որ ընդգրկել է համարեա ամբողջ Կօսօվայի վիլայէթը։

Հրատարակվեց Բ. Դրան հետևեալ հաղորդագրութիւնը. «Տանելով իր հետ յիշողութիւն սրտագին ընդունելութեան մասին, սերբիական թագաւորը և Սերբիայի պետական մարդիկ Թիւրքիայում թողնում են այնպիսի տպաւորութիւններ, որոնց ազդեցութիւնը շատ նպաստաւոր կերեւայ երկու երկիրների յարաբերութիւնների համար։ Երկու կառավարութիւնների անդամների անմիջական շփումը առիթ տըւեց մտքերի փոխանակութիւն կատարելու. երկու երկիրների տնտեսական հարցերի մասին։ Լիովին հիմք կայ վկայելու, որ երկու կողմերն էլ ոգեւորված են պետութեան և թագաւորութեան ընդհանուր բարեկեցութիւնը զարգացնելու միատեսակ ցանկութեամբ՝ երկուստեք խաղաղ և անկեղծ քաղաքականութեան ազդեցութեան ներքոյ»։

Ալբանացիները վերջին կռւում Թիւրքերից խլեցին մի թնդանօթ։ Միտրօվիցայից հեռագրում են, որ զօրքերի թիւը քիչ է, շարժումը աճում է հետզհետէ։ Նրա գլուխ կանգնած է ալբանացի պարագլուխ Իսա-Բօլետինացը, որ մի բէակցիօնէր և աւազակապետ անձն է։ Ալբանիայում ամենուրեք գործում են պատերազմական դատարաններ։ Սալօնիկում նրանք անգործ են յանցագործութիւնների բացակայութեան պատճառով։

Պրիշտինի միւթէսարըֆի հաղորդագրութիւնից երևում է, որ մարտի 20-ի կռիւը, որ սկսվել էր ցերեկվայ ժամը 2-ից և տևեց մինչև կէս գիշեր, վերջացաւ նրանով, որ քաղաքում և մօտակայ գիւղերում հանդստութիւնը վերականգնվեց։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 26 մարտի

Եկաւ Թիւրքաց նախկին մեծ վէզիր Հիլմի փաշան և կայարանում ընդունվեց արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչներից և Թիւրքաց դեսպանատան պաշտօնեաներից։ (Հ. Գ.)

Բեռլին, 26 մարտի

Ոստիկանութիւնը Թոյլատրեց սօցիալ-դեմօկրատներին կիրակի օրը միտինգ գումարել ընտրողական բարենորոգման դէմ Տրէպկօվեան ծառաստանում։ Թոյլատրված է նաև սօցիալ-դեմօկրատների սկզբում արգելված ժողովը Հումբօլդեան ծառաստանում։ (Հ. Գ.)

Սալօնիկ, 26 մարտի

Պրիշտինի գաւառի Լաբէ գիւղի մօտ, ալբանացիները դարանամուտից յարձակվեցին Թիւրքաց զօրամասի վրա։ Զոհվեցին 8 մարդ։ Ըստ երևոյթին՝ թշնամական գործողութիւններ սկսվում են Պրիշտինի, Գիլանի, Պրիզրէնի, Իփէկի և Դիակօվօյի ամբողջ շրջանում։ Լուրերին նայած, լուրջ անկարգութիւններ եղել են Պրիշտինում։ Սալօնիկի պատերազմական դատարանը քառամեայ բանտարկութեան դատապարտեց տեղիս յունական դեսպանատան պաշտօնեայ Ալէքսանդր Պէխինին յունական հրոսակախմբերին մասնակցելու համար։

Վերջին տեղեկութիւնների համաձայն Պեօտր Թագաւորը կանգ չի առնի Սալօնիկում։ (Հ. Գ.)

Հռօմ, 26 մարտի

Արտաքին գործերի նախկին մինիստր Տիտտօնին նշանակվեց իտալական դեսպան Պարիզում։ (Հ. Գ.)

Պարիզ, 26 մարտի

Հավասը հաղորդում է, որ իտալական արտաքին գործերի մինիստր Դի-Սան-Ջուլիանօն այցելեց Պիշօնին և նրա հետ ունեցաւ մի ժամից աւելի խօսակցութիւն գլխաւորապէս արտաքին քաղաքականութեան հարցերի մասին։ Խօսակցութեան ժամանակ երկու մինիստրներն էլ վկայեցին, որ երկու երկիրների մէջև շօշափված բոլոր հարցերի վերաբերութեամբ գոյութիւն ունեն էլ աւելի լաւագոյն յարաբերութիւններ։ (Հ. Գ.)

Խրիստիանիա, 26 մարտի

«Մօրգէն-Բլադէտ» տեղեկութիւնների համաձայն, Հաակօն թագաւորը մայիսին այցելելու է ռուսաց կայսերական զոյգին։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱ՞Ն ԹԷ՞ ՊՕԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ ԵՒ Ո՞ՐՏԵՂ

Բարձր կրթական հաստատութիւնների անհրաժեշտութիւնն և կարևորութիւնը անվիճելի է ու ակներև ամենի համար։ Մանաւանդ բարձր կրթական հաստատութեան գոյութիւնը մօտ 10 միլիօն ազգաբնակութիւն ունեցող և բնութիւնից ամեն տեսակ բարիքներով օժտված Կովկասի համար վաղուց դարձել է հերթական և կեանքը հրամայողաբար միշտ դրա պահանջն է դրել ու զգացնել տուել այդ տեսակ կրթական հաստատութեան բացակայութիւնը։

Սակայն, եթէ մինչև օրս այդ գլուխ չէ եկել, ոչ թէ այն պատճառով, որ գտնվել է գոնէ մէկը, որ հակառակ լինէր այդ գաղափարի իրագործման, ո՛չ, ընդհակառակը բոլորն էլ համարել են երկիրը շատ վաղուց արդէն հասունացած գոնէ մի որևէ բարձրագոյն կրթական հաստատութեան համար։ Այս միտքը նոյն իսկ մի քանի տասնեակ տարիներ առաջ արծարծվել է մամուլի մէջ և հանգուցեալ Գրիգոր Արծրունին իր զօրեղ գրչով «Մշակի» էջերից ջերմագին պաշտպանել է Թիֆլիսում համալսարան հիմնելու խնդիրը իր առաջնորդողներով։ Իսկ եթէ այդ գլուխ չէ եկել, չէ իրականացել և մեր երկիրը մինչև օրս էլ զուրկ է մնացել գոնէ մի բարձրագոյն կրթական հաստատութիւն ունենալուց, այդ բանում մեղաւոր է այն հին պետական կարգը, որի բարձր ներկայացուցիչները լայնածաւալ պետութեան բուն շահերը մի կողմը դրած՝ հետամուտ էին նեղ քաղաքական, ազգայնական և այլ կործանիչ միակողմանի նպատակների, որոնք և բնականաբար հասցրին պետութիւնը ոչ թէ կուլտուրական ծաղկման, այլ Ցուսիմային… Բարեբաղդաբար հին պետական կազմի վերացման շնորհիւ շատ բան փոխվեց։ Դեռ նորերս Սարատով քաղաքում մի նոր համալսարանի հիմնադրութեան տօնահանդէսը տեղի ունեցաւ։ Այժմս էլ հերթական պէտք է համարել Կովկասում բարձրագոյն կրթական հաստատութեան բացումը։ Աչքի առաջ ունենալով այժմեան կառավարութեան բարեհաճ տրամադրութիւնը դէպի մեր աչքաթող արված ու մոռացութեան մատնված երկիրը, լիովին կարելի է յուսալ, որ մօտ ապագայում Կովկասն ևս վերջապէս կունենայ գիտութեան բարձրագոյն տաճարներից մէկը։ Սակայն ինչ տիպի բարձր կրթական հաստատութիւն է հարկաւոր Կովկասին և որտեղ պէտք է հիմնվի նա,—ահա մի շատ լուրջ խնդիր, որն արդէն քննութեան է առնված կովկասեան մամուլի մէջ և որի բազմակողմանի կերպով արված լուսաբանութիւնը մեծապէս կը նպաստէ նրա բարեյաջող լուծման։

Խնդիրը ձևակերպված է այսպէս՝ համալսարա՞ն թէ պօլիտեխնիկում, իսկ տեղի վերաբերմամբ մրցութեան մէջ են երկու քաղաքներ՝ Թիֆլիսը և Բագուն։

Ոչ ոք չէ կարող ժխտել, որ Կովկասին հարկաւոր է և համալսարան, և պօլիտեխնիկում, և… Բայց քանի որ այժմս առաջարկվում է անել ընտրութիւն և տալ գերադասութիւն կամ համալսարանին կամ պօլիտեխնիկումին, մենք ևս մեր այս յօդուածով կամենում ենք գէթ մասամբ պարզել թէ դրանցից որի՞ն պէտք է առաւելութիւն տալ։ Կարիք չը կայ ապացուցանելու, որ մեր երկրին անհրաժեշտ են և համալսարանական մասնագէտներ և պօլիտեխնիկական։ Երկու տեսակի կարիքն ևս զգալի է ամեն մի քայլափոխում։ Մեզ պէտք են և բժիշկ, և իրաւաբան, և լեզուագէտ, և բնագէտ, և տեխնիկներ, ինժեներներ, մեքենագէտներ, գիւղատնտեսներ հայլն հայլն։

Մեր երկիրը տալիս է անսահման հում նիւթ գիտական ուսումնասիրութիւնների համար՝ լեզուական, իրաւաբանական, բնագիտական, մարդաբանական, կրօնական և այլ տեսակէտներից, նաև իր մէջ պարունակվող բնական հարստութիւնների համար պահանջում է զուտ տեխնիքական մեքենայաբանական գիտութիւնների մասնագէտներ, որոնք կարող են գործադրել երկրի մէջ բնական հարստութիւնների շահագործման լաւագոյն միջոցները։

Այս պատճառով էլ՝ եթէ մենք վճռենք հիմնել կամ միայն պօլիտեխնիկում, կամ միմիայն համալսարան, այդպիսով խնդիրը լուծած կը լինենք յատկապէս մեր երկրի համար շատ միակողմանի կերպով։ Դիցուք թէ հիմնվեց պօլիտեխնիկում։ Բայց չէ՞ որ այդ տիպի դպրոցը ծառայելու է երկրի միմիայն արդիւնաբերութեան ծաղկմանը և չէ կարող լայն կերպով նպաստել երկրի մտաւոր - կուլտուրական բարգաւաճմանը ընդհանրապէս։ Դիցուք թէ հիմնվեց համալսարան իր սովորական չորս մասնագիտական բաժիններով. այդ դէպքում տուժելու են զգալի կերպով երկրի արդիւնաբերական և տնտեսական պայմաններն ու դրանց զարգացումը։

Հետևաբար՝ մեր երկրի առանձնայատուկ պայմանները ի նկատի առնելով, մենք կարիք ունենք այնպիսի մի բարձրագոյն կրթական հաստատութեան, որ իր մէջ պարփակէր և համալսարանական բաժինը և պօլիտեխնիկականը։

Ինչպէս յայտնի է, պօլիտեխնիկումը անկարող է ունենալ համալսարանական ճիւղ, ուրեմն և ոչ մի կերպ չէ կարելի մեր երկրի համար առաւելութիւն տալ նրան։ Բայց համալսարանը կարող է ունենալ և պօլիտեխնիկական ճիւղ, այսինքն բնագիտական բաժինն կարելի է կցել գիւղատնտեսականը, իսկ ֆիզիկօ-մաթեմատիկական բաժնին՝ պօլիտեխնիքականը։ Այսպէս ուրեմն մեր կարծիքով Կովկասին անհրաժեշտ է համալսարան պօլիտեխնիքական ճիւղով, որոշ ծրագրային փոփոխութիւններով և կրճատումներով, յարմարեցված մեր երկրի պահանջներին ու պայմաններին։ Այս տեսակ համալսարանը միանգամայն կը գոհացնէ Կովկասի բազմակողմանի կարիքները և կունենայ շատ և շատ յարմարութիւններ յատկապէս մեր երկրի ազգաբնակութեան համար։ Այդ յարմարութիւններից ամենակարևորագոյնն այն է, որ երբ Կովկասը կունենայ իր համալսարանը պօլիտեխնիկական ճիւղով, Կովկասի ուսանողութիւնը ստիպված չի լինի հեռանալ հայրենիքից հեռաւոր այլ համալսարանական վայրեր, ուր ուսանողական չարքաշ կեանքը անհամեմատ աւելի մեծ ծախքեր է պահանջում և որ գլխաւորն է՝ կովկասեան ուսանողութիւնը, մնալով հայրենիքում, պահպանած կը լինի իր առողջութիւնը այն վտանգներից, որոնք սպառնում են Կովկասի զաւակներին Ռուսաստանի կլիմայական պայմաններն և այլ հանգամանքները։

Այստեղ հարկաւոր ենք համարում մէջ բերել և կովկասեան համալսարանի այն առաւելութիւնը, որի վրա մի ժամանակ մատնանշել է հանգուցեալ Գրիգոր Արծրունին. Կովկասի երիտասարդութիւնը իր բարձր կրթութիւնը երբ հնարաւորութիւն կունենայ հայրենիքում ստանալու, այդ դէպքում նա հեռու կը մնայ վնասակար ազդեցութիւններից։

Իսկ ո՞ր քաղաքին առաւելութիւն տալ բարձր կրթական հաստատութիւն հիմնելու համար՝ Թիֆլիսի՞ն թէ՞ Բագուի՞ն։ Մեր կարծիքով՝ Թիֆլիսը անհամեմատ շատ առաւելութիւններ և յարմարութիւններ ունի, քան Բագուն։

Թիֆլիսն է Կովկասի մայրաքաղաքը և իր դիրքով մօտաւորապէս կենտրոնական տեղ է բռնում կովկասեան ծայրագաւառների վերաբերմամբ. այստեղ են կենտրոնացած նաև կովկասեան գիտական-կրթական բոլոր խոշորագոյն հաստատութիւններն ու ընկերութիւնները, մինչդեռ Բագուն ընկած է հեռու ծովափի վրա և նրա միակ հետաքըրքրական կողմը կազմում է նաւթի արդիւնաբերութիւնը և ուրիշ ոչինչ։

Կլիմայական և աշխարհագրական այլ պայմանների տեսակէտից Թիֆլիսն անհամեմատ յարմար է, քան Բագուն։ Այս մասին կարիք էլ չը կայ խօսելու։ Ո՞վ ծանօթ չէ Բագուի աւազոտ փողոցներին, ապրիլից մինչև հոկտեմբերի մէկը տևող անտանելի շոգերին, երբ մայիսի 1-ից քաղաքը սկըսվում է դատարկվել, ձմեռվայ՝ դանակի պէս կտրող անտանելի ցուրտ հիւսիսային քամիները, իսկ ամառվայ մեղկացուցիչ, խոնաւութիւն բերող հարաւային քամին, որ մոծակներով լցնում է քաղաքը, բուսական աշխարհի կատարեալ բացակայութիւնը, բնակարանների խոնաւութիւնը, անհամ ջուրը և այլն և այլն։ Ջուր չէր Բագուն մի ժամանակ ծառայում իբրև աքսորավայր Ռուսաստանից հալածվող աղանդաւորների և այլ կարգի աքսորականների համար։ Չէ՞ որ Բագւում ապրող ամեն մի անհատ գիշեր-ցերեկ հէնց միայն երազում է, թէ երբ պէտք է մի հնարով կարողանայ գոնէ ժամանակաւորապէս դուրս պրծնել աշխարհագրական այդ դժոխքից։

Աւելացրէք այդ ամենին բնակարանների կատարեալ կրիզիսը և նրանց անասելի թանգութիւնը։ Մթերքների և այլ կենսական նիւթերի անհամեմատ սուղ գները։ Փողոցների և քաղաքամասերի անծայր կեղտոտութիւնը, իսկ անձրևների ժամանակ դրանց միջով գետերի հոսելը։ Վերջապէս այն մեծ վտանգը, որ շարունակ սպառնում է Բագուին, այսինքն Աստրախանի և Պարսկաստանի կողմից համաճարակ հիւանդութիւնները՝ խոլերան և ժանտախտը։

Եթէ մինչև իսկ վճռվի բանալ պօլիտեխնիկում, այդ պէտք է հիմնել Թիֆլիսում և ոչ Բագւում։

Միակ բանը, որի համար առաջարկում են հիմնել անպատճառ զուտ պօլիտեխնիկում և այն էլ անպատճառ Բագւում, է միմիայն Բագուի նաւթը։

Բայց մի՞թէ արդիւնաբերութեան մի մասնակի ճիւղը, ինչպիսին է նաւթայինը, կարող է բաւականաչափ գոհացուցիչ լինել մի բարձրագոյն կրթական հաստատութեան համար։ Միթէ կարելի է ուսանողութիւնը 4—5 տարիներով զբաղեցնել ծօլօնկայի ու կաչեգարկայի տեսքով և ուսումնասիրութեամբ…

Այդ դեռ շատ ու շատ քիչ է պահանջելու համար, որ նախ՝ անպատճառ լինի պօլիտեխնիկում և երկրորդ՝ որ նա անպատճառ հիմնվի Բագւում։

Ա. Նազարէթեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախալցխա, 22 մարտի

Ամսիս 14-ին ս. Փրկիչ եկեղեցում կայացաւ ծխ. ժողով, որի զբաղման առարկաների մէջ կար ի միջի այլոց նաև նոյն եկեղեցում գտնվող հնութիւնները Էջմիածին ուղարկելու հարցը և Ախալքալաքի գաւառի Սուլտա գիւղի ուսումնարանին տրվելիք նպաստի խնդիրը։

Առաջինի վերաբերմամբ, ինչպէս յայտնի է, Վեհ. Կաթողիկոսը առանձին կոնդակով կարգադրել է Էջմիածին ուղարկել այնտեղի թանգարանում կենտրոնացնելու համար՝ եկեղեցիներում գտնվող բոլոր հնութիւնները՝ բացառութեամբ այնպիսիների, որոնք տեղական ժողովրդի աչքում սրբութիւն են նկատված։ Այդ կոնդակի հիման վրա էլ Թիֆլիսից առաջարկված էր ս. Փրկչի երեցփոխին՝ ուղարկել այստեղի թանգարժէք անօթները և ձեռագիրները, սակայն երեցփոխն իր իրաւունքից բարձր համարելով առանց ծխականների հաւանութիւնը ստանալու կատարել առաջարկը՝ բացասական պատասխան էր տուել իր ժամանակին։ Կօնսիստօրիան, իրաւացի գտնելով երեցփոխի մերժման պատճառաբանութիւնը, նոր առաջարկով հրահանգում է ծխ. ժողով անել այդ առիթով։

Յիշեալ ժողովում ծխականների արտայայտած կարծիքն այն էր, որ ժողովուրդը չէ ցանկանում իր սեփականութիւնը եղող այդ հնութիւններից զրկվել՝ յանձնելով նրանց Էջմիածին, վստահ չը լինելով՝ որ այնտեղ ապահով կը մնան։ Օրինակ էր բերվում վերջերս Երուսաղէմի վանքից թանգագին իրերի յափշտակման դէպքը և այդպիսի պատճառաբանութեամբ էլ մերժվեց կօնսիստօրիայի առաջարկը։ Ի դէպ՝ պէտք է ասել, որ այստեղի հնութիւնների շարքերում թանգարժէք իրեր չը կան, և եթէ կան էլ, այդպիսիները շատ տարիներ առաջ անհետացել են։

Հետաքրքրական էր ժողովից դուրս այդ առիթով եղած խօսակցութիւնը. ծխականներից մի՛ը սրամիտ կերպով առաջարկում էր փոխանակ եկեղեցիների հնութիւնները հաւաքելու՝ հաւաքել տգէտ հոգևորականներին ժողովրդի միջից և նրանց պահել կենտրոնական թանգարանում։

Սուլտայի ուսումնարանին նպաստ տալու հարցի վերաբերմամբ որոշվեց, համաձայն նախկին ծխ. ժողովի որոշման, նպաստ տալ այն դէպքում, երբ յիշեալ գիւղը ուսումնարանի սեփական շէնք կունենայ։ Սուլտա գիւղը պատկանում է մեր ս. Փրկչի եկեղեցուն։ Ծխ. ուսումնարանները վերաբացվելիս՝ ծխ. ժողովի կողմից որոշվել է տալ ուսումնարանազուրկ նպաստ երեք եկեղեցապատկան գիւղերին 1100 ր., որից 300 ր. բաժին է ընկնում Սուլտայի ուսումնարանին։ Սակայն որոշումը պայմանական է։ Պէտք է նպաստ տրվի այն դէպքում, երբ ուսումնարանի համար յատուկ շէնութիւն լինի գիւղերում։ Այս ուսումնական տարվայ ընթացքում սուլտացիները մի մասնաւոր տան մէջ բաց են արել ուսումնարան և այդ իբր հիմք ընդունելով, որ ուսումնարանը արդէն գոյութիւն ունի, պահանջել են նպաստը ս. Փրկչի ներկայ հոգաբարձութիւնից։ Համապատասխան չը գտնելով եղած որոշման, հոգաբարձութիւնը ծխ. ժողովի առաջ էր դրել նպաստ տալու խնդիրը, որը, ինչպէս վերը յիշեցի, հաստատեց նախորդ ժողովի որոշումը, առաջարկելով նպաստ տալ այն դէպքում, երբ գիւղացիները կը շինեն ուսումնարանի համար յատուկ շէնք։ Խելացի ենք գտնում այդ որոշումը այն տեսակէտից՝ որ դրանով գիւղացին ստիպված է լինում ուսումնարանի յատուկ շէնք ունենալ՝ իր սեփական միջոցներով կառուցված, որը կարևոր է դըպրոցի գոյութիւնը հաստատուն պահելու համար, որովհետև մի անգամ երբ շէնքը գոյութիւն ունենայ, գիւղացին այլ ևս նախանձախնդիր կը լինի նրան միշտ հաստատուն պահելու, մինչդեռ՝ առանց նրան՝ հէնց որ դրսի նպաստը դադարի, դեռ ուսման կարիքը անհրաժեշտ չը դառած՝ դըպրոցի գոյութիւնը ամեն րոպէ վտանգի կարող է ենթարկվել։

Ժողովի վերջում ծխականների կողմից առաջարկ եղաւ հերթական հարց դարձնել յաջորդի ընտրութիւնը։ Արծիկ

ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Կիրակի օրերը առանձին տօնական կերպարանք է տալիս Մօսկվային աշակերտութիւնը. աշակերտները խմբովին իրանց ուսուցիչների և վարժուհիների հետ շարքերով ուղևորվում են զանազան հասարակական հիմնարկութիւններ դիտելու։ Փառք Աստուծոյ, այդ կողմից Մօսկվան աղքատ չէ։ Որպէս մայրաքաղաք՝ այստեղ են կենտրոնացել Ռուսաստանի թէ անցեալ և թէ ներկայ կեանքի պատմական յիշատակարանները։ Աւելորդ չի լինի յիշատակել պատմական, պօլիտեխնիկական, Ստրօգանովի գեղարւեստական-արդիւնաբերական համալսարանի և այլն պետական և հասարակական թանգարանները, ուր կարելի է յաճախել թէ փողով և թէ ձրի, նայած թէ ո՞րն ես յաճախում։ Մանաւանդ հետաքրքրական է պօլիտեխնիկական թանգարանը, որ պատկերացնում է Ռուսաստանի այժմեան կուլտուրական պատկերը, ուր քիչ թէ շատ աչքի են ընկնում Կովկասի և Թուրքեստանի կուլտուրայի վերաբերեալ նմուշները, մանաւանդ Թուրքեստանինը, որին յատկացված է առանձին բաժանմունք։ Բացի այս թանգարաններից՝ աշակերտների համար իրանց ծառայութիւնն են մատուցանում թատրօնները, որոնց թիւը 10-ի է հասնում, բուսաբանական և կենդանաբանական այգիները, այլևայլ պատկերասրահները (մանաւանդ Տրետեակօվինը), որոնք արդիւնք են Մօսկվայի հարուստների տասնեակ միլիօնների զոհաբերութեան։ Ամեն բարիք և յարմարութիւն տրված է մայրաքաղաքի ուսանողների համար։ Այնպէս որ նա, աշակերտութիւնը, ոչ միայն մեր գիւղական և քաղաքների աշակերտների նման թափառում է երևակայական աշխարհում, այլ և հնարաւորութիւն ունի ուսածը տեսնելու, զննելու. հարկաւոր հետևանքը լինելու է առարկայի գիտակցօրէն ըմբռնումը՝ լինի նա պատմական, կենդանաբանական, բուսաբանական, ֆիզիկական թէ տեխնիկական աշխարհից։

Ինչպէս մեզանում զօրախաղի ժամանակ զօրքը այս ու այն կողմն է գնում, երբեմն մի տեղ է երևում, երբեմն էլ միւս տեղ, որ կողմը նայես՝ զինուոր ես տեսնում, այնպէս էլ Մօսկվայում, ինչպէս ասացի, կիրակի օրերը փողոցներով և էլեքտրաքարշով անց ու դարձ են անում իրանց ուսուցիչներով ու վարժուհիներով աշակերտներն ու աշակերտուհիները։

Էլեքտրաքարշով գնում ես. յանկարծ լսում ես, որ էլեքտրաքարշը լցվեց անհոգ մանկական ծիծաղով ու զրոյցով. ակամայից հետաքրքրվում, հարցնում ես.

— Այսպէս խմբով ո՞ւր էք գնում։

— Մեծ թատրօնը,—լինում է պատասխանը։

— Ի՞նչ են խաղում։

— Конекъ горбунокъ.

— Դա էլեքտրաքարշի տոմսակ չէ՞ք վերցնում։

— Մենք չենք վճարում. մեզ համար պատուիրված է, որ ձրի թողնեն։

— Ո՞րտեղ էք սովորում։

— Քաղաքի տարրական դպրոցում,—պատասխանում է ժպտադէմ սանուհին։

Իսկոյն ձեզ համար հասկանալի է լինում, թէ ինչու են ձրի տեղափոխում աշակերտներին։

Մօսկվայի քաղ. ինքնավարութիւնը հասարակական մի հիմնարկութիւն է, որ որքան էլ պակաս կողմեր ունենայ, պէտք է քիչ թէ շատ համակրանքով վերաբերվել դէպի նա։ Ես չեմ ուզում ծանրանալ ընդհանրապէս, թէ նա ինչ է արել քաղաքի բարեզարդութեան համար, թէ ինչ հասարակական և կրթական հիմնարկութիւններ է հիմնել ու պահում և թէ որքան քաղաքի համար առողջապահիկ վիճակ ստեղծել. ես այդ մասին այժմս չեմ գրելու. դրա համար հարկաւոր են բաւական վիճակագրական տեղեկութիւններ. այլ կը ծանրանամ դըպրոցական գործի վրա, որ կազմում է քաղաքի ինքնավարութեան առանձին հոգածութեան առարկան։ Ինչպէս գիտէ ընթերցողը, Մօսկվան մեծ քաղաք է և համարձակ կարելի է ասել, որ նրա շառաւիղը 6—7 վերստ է հասնում։ Այդքան ընդարձակ տարածութեան վրա՝ դուք փողոց չէք գտնի, որ չունենայ մէկ, երկու, երբեմն էլ աւելի տարրական դպրոցներ. տարրական դըպրոցների թիւը մօտ 1500-է, ի բաց առեալ բոլոր մասնագիտական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցները. և քաղաքն իր տարրական դպրոցներին նախահաշւով առերկան նպաստ է տալիս մօտ 3 միլիօն ր., չը հաշուած այն նպաստները, որ նա յատկացնում է միջնակարգ և բարձրագոյն դպրոցներին։ Կարելի է համարձակ ասել, որ եթէ ընդհանուր պարտադիր ուսում չէ մտցված Մոսկվայում, բայց համարեա նա փաստօրէն իրականացած է տեղումս և որի համար քաղաքի ինքնավարութիւնը միջնորդութիւն է յարուցել մինիստրութեան առաջ։

Պարզ բան է, որ այս տեսակ մթնոլորտում սնվող և դաստիարակվող պատանին աւելի պատրաստականութիւն կունենայ մաքառելու գոյութեան կռւում, քան թէ մերոնք, որ զուրկ են դպրոցական ամենաանհրաժեշտ տարրական պահանջներից անգամ։

Այս բոլորը տեսնելով, մարդ ակամայից յիշում է մեր Կովկասը իր կրթական հիմնարկութիւններով, մեր եկեղեցական-ծխական դպրոցներն իրանց փտած հոգաբարձուներով և այն կօպէկները, որոնք հաւաքվում են մեր խեղճ ու աղքատ ժողովրդից և գնացան խմբակցութիւնների բայծայական գժտութիւնների պատճառով առանց օգուտ տալու կրթական գործին՝ կորչում ապարդիւն։

Մարդ սրտի կսկիծով կարդում է լրագրութեան մէջ մեր դպրոցների շուրջը տեղի ունեցող աղմուկները, տուրուդմփոցները, հոգաբարձական ընտրութիւնները։ Պարոնայք, ձեր վարմունքը նման է այն վանդալների վարմունքին, որոնք կոպիտ ուժով ոտնատակ արին հռոմէական քաղաքակրթութիւնը և դանդաղեցրին այդպիսով ազգերի ապագայ զարգացումը։

Ճիշդ է, քանդուածը նորից կը վերաշինվի, յարութիւն կառնի, բայց ուշ կը լինի, որովհետև մեր ժամանակներում, երբ գիտութիւնը և տեխնիկան հսկայական քայլերով առաջ են գնում և կերպարանափոխում մարդկային միջազգային յարաբերութիւններն ու կենցաղը, ամեն մի դանդաղումն կուլտուրական ասպարիզում նշան է մահացութեան։

Սթափվեցէք ձեր խոր քնից և թողէք ձեր գձուձ անձնական հաշիւները՝ յօգուտ մեր յետագայ սերունդի, եթէ չէք ուզում կուլտուրապէս նուաճվել ուրիշներից։

Էն-էն

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

VI

Բագու, 24 մարտի

Մի քանի ժամանակ առաջ Թիֆլիսից ինձ մօտ հիւր էր եկել իմ ընկերներիցս մէկը, որը առաջին անգամն էր Բագւում։ Ես ամբողջ երեք օր պտտեցրի նրան քաղաքում, ցոյց տուի բոլոր աչքի ընկնող և յայտնի շինութիւններն ու տեղերը. և երբ ամեն ինչ տեսել վերջացել էինք, ես ասացի նրան, որ այլևս ոչ մի հետաքրքրական բան չը կայ տեսնելու։

Ընկերս նախ զարմացած նայեց վրաս և յետոյ քծիծաղ տալով ասաց.

— Ես զարմանում եմ քեզ վրա. մի ժամանակ դու թատրոնի սիրահար էիր, իսկ այժմ կարծես թէ նա բոլորովին գոյութիւն չունի քեզ համար։ Միթէ դու այժմ այնքան ես ատում նրան, որ նոյն իսկ չես էլ կամենում ցոյց տալ ինձ ձեր թատրոնը։

— Բայց մենք թատրոն չունենք,—պատասխանեցի ես։

— Ինչպէս, Բագուի պէս հարուստ քաղաքը իր քաղ. թատրոնը չունի՞։

— Ոչ թէ միայն քաղաքային, այլ նոյն իսկ ոչ մի հատ ժամանաւոր թատրոն էլ չունենք մենք, սիրելիս։

Ընկերս զարմացած նայեց դէմքիս և յետոյ գլուխը թափահարելով հեռացաւ։

Այո, ընթերցող, չը զարմանաս. նաւթային կրեսոսների մայրաքաղաքը թատրոնական և ոչ մի շինութիւն չունի...

Ճիշդ է, մենք ունէինք Թաղիևի փոքրիկ, տգեղ, գոմանման թատրոնը, որին ինչ անուն ուզէիք կարող էիք տալ՝ բացի թատրոնից, բայց այն էլ անցեալ տարի այրվեց և այժմ մեզ մնացել է միայն եղբ. Նիկիտինների ցիրկը, որին նրա տէրերը մի կերպ յարմարեցրել են թատրոնի համար։ Ահա այդտեղ են հիւրընկալվում և դրամատիքական խումբը, և օպերան, և ըմբիշները։

Երբ դուք անցնէք մեր փողոցներով, կը տեսնէք, որ ամեն քայլափոխում՝ միմեանց կողքի վիթխարի, հարիւր-հազարներ արժեցող տներ են շինվում, և ոչ մէկը չէ էլ մտածում գոնէ մի փոքրիկ յարմար թատրոնական շէնք կառուցանել, չը նայած որ նա աւելի մեծ շահ կը բերէ, քան թէ տունը։

Ահա այդ բացը աչքի առաջ ունենալով, մի խումբ մարդիկ ակցիօներական ընկերութիւն են կազմել մի յարմար թատրոնական շինութիւն կառուցանելու համար։ Ընկերութիւնը արդէն կապալով վերցրել է Տօրգովայա փողոցում, եղբ. Նիկիտինների ցիրկի կողքին գտնվող Մայիլովի հողաբաժինը և ներկայումս քանդում է նրա վրա գտնվող խարխուլ շինութիւնը՝ թատրոն կառուցանելու համար։

Նոր թատրոնը մի բաւականին մեծ, յարմարաւոր շինութիւն է լինելու, օժտված ամեն յարմարութիւններով, շարժական բեմով և այլն... Բացի թատրոնական դահլիճից, նա ունենալու է նաև համերգային դահլիճ, ճաշարան, կաֆէ և այլն, շրջապատված է լինելու այգիով, որի մէջ պէտք է շինվի առանձին ամառային բաց բեմ։

Ինչպէս ասում են, նոր թատրոնը պատրաստ պէտք է լինի առաջիկայ տարին։

Վ. Դիմաքսեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 26 մարտի

Նախագահում է Գուչկովը։

Ալեքսէենկօն զեկուցանում է 1910 թւի եկամտի պետական նախահաշւի օրէնքի նախագիծը, որի համաձայն վերջնական հաշւով ընդհանուր գումարը անում է 2.579,187,880 րուբլի, որի մէջ եկամուտները ծախքերից աւելի են 4.496,973 րուբլով, որպիսի գումարը մտադրվում է գործ դնել պետական պարտքերը հանգցնելու վրա։

Նախագիծը ընդունվում է։

Ընդունվում է նաև Ալեքսէենկօյի առաջարկութիւնը, որ այն դէպքում, եթէ Պետական Խորհուրդը չընդունէ յիշեալ նախագիծը, կազմվի մի համաձայնեցուցիչ յանձնաժողով տասն անդամից բաղկացած։

Նախագահական տեղը գրաւում է իշխ. Վոլկօնսկին։

Դուման անցնում է տեղական դատարանի օրինագծի երրորդ քննութեան։

Մինիստրների օթեակումն է արդարադատութեան մինիստրը։

Առաջարկված են 255 ուղղումներ։ Շուբինսկին զեկուցանում է դատական մասնաժողովի եզրակացութիւնը ամեն մի ուղղման մասին։ Այն յօդուածի վերաբերութեամբ, որի համաձայն դատավարութիւնը դատաստանական հիմնարկութիւններում պարտաւորապէս պահանջվում է ռուսերէն լեզուով կատարել, բայց որը և թոյլ է տալիս ամեն մի տեղում, ուր գերակշռում է որևէ այլացեղ ազգաբնակութիւն, խօսակցութիւնը կատարել այդ ազգաբնակութեան լեզուով, զեկուցանողը ասում է, որ բոլոր ուղղումները մասնաժողովը մերժել է, բացի Մացէևիչ քահանայի ուղղումից, որի համաձայն թոյլատրվում է ցանկացողներին երդում տալ դատարանին մայրենի լեզուով։

Արդարադատութեան մինիստրը դէմ է ինչպէս դատավարութիւնը օտար լեզուով կատարելուն, այնպէս և Մացէևիչի առաջարկութեանը։

Մինիստրի հետ համակարծիք չեն Լեախնիցկին, Խասմամեդովը, Գեռասիմովը, Լուչիցկին, Մացէևիչ քահանան, Մակլակովը, Ռոդիչևը։ Մինիստրի կարծիքը պաշտպանում են բարոն Չերկասով, Կովալենկօ 1-ին, Զամըսլովսկի։

Զեկուցանող Շուբինսկին, բանաձևելով խօսակցութիւնները, պաշտպանում է մասնաժողովի եզրակացութիւնը։

Քուէարկութեամբ յօդուածը ընդունվում է մասնաժողովի խմբագրութեամբ և քահանայ Մացէևիչի ուղղումով։

Ապա ընդունվում են մասնաժողովի խմբագրութեամբ դատական հիմնարկութիւնների կանոնադրութեան յետագայ յօդուածները մինչև 15։

Երեկոյեան նիստում նախագահում է Գուչկովը։

Մինիստրների օթեակումն են մինիստրների խորհրդի նախագահը, ծովային, արդարադատութեան մինիստրները, երկրագործութեան գլխաւոր կառավարիչը, պետական վերահսկիչը, մինիստրների մի քանի օգնականները։

Շուբինսկին յիշեցնելով ծովային գեներալ շտաբի պաշտօնեաների թւացուցակի օրինագծի քննութեան գործնական կողմը, որպիսի նախագիծը, ընդունվելով Պետական Դումայից և Խորհրդից, չը ստացաւ Բարձրագոյն հաստատութիւն, յարուցելով Բարձրագոյն հրովարտակ՝ Հիմնական Օրէնքների 96 րդ յօդուածի գործադրութեան կարգին վերաբերող կանոններ մշակելու և հրատարակելու մասին, զեկուցանում է, որ հարցապնդումների մասնաժողովը, քննելով սօցիալ-դեմօկրատների և աշխատաւորականների ֆրակցիաների 32 անդամների յայտարարութիւնը՝ հարցապնդում ուղղելու մինիստրների խորհրդի նախագահին 1909 թ. օգոստոսի 24-ի այդ կանոնները հրատարակելու առիթով, որոնք պարունակում են Հիմնական Օրէնքների 96-րդ յօդուածի իբր բացարձակ և էական փոփոխութիւն, եկաւ այն եզրակացութեան, որ հարկաւոր է հարցապնդումը մերժել։

Գեգեչկօրին, գտնելով որ սօցիալ-դեմօկրատները հանդէս կը գան ի պաշտպանութիւն օրինականութեան սկզբունքների ոչ յանուն երրորդ Դումայի պրեստիժի, այլ յանուն ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարի, կանգ է առնում հարցապնդման հիմունքի իրաւագիտական անալիզի վրա։ Զեկուցանողի այն յայտարարութիւնը, իբր հարցապնդումի առարկայ կարող են լինել միայն մինիստրների գործողութիւնները, և ոչ Բարձրագոյն ակտերը, հռետորի կարծիքով հակասում է բոլոր սահմանադրական պետութիւնների թէօրիային և պրակտիկային։ Գերագոյն իշխանութեան անպատասխանատուութեան դէպքերում միշտ պատասխանատու են մինիստրները։ Եթէ օգոստոսի 24-ի կանոնները հիմք չունեն-- աւելի վատ, որովհետև հիմքի, վաւերացման բացակայութիւնը, հանդիսանալով Հիմնական Օրէնքների 24-րդ յօդուածի բացարձակ խախտումն, ինքնին կարող է հարցապնդման հիմք ծառայել։

Զինուորական օրէնսդրութեան յատուկ յօդուածների մանրամասն բաղդատութեամբ հռետորը եզրափակում է, որ այդ յօդուածներով միանգամայն ճշգրտօրէն սահմանվում է Հիմնական Օրէնքների 96-րդ յօդուածի նախնական բնագիրը, իսկ օգ. 24-ի կանոնները, խախտելով Հիմնական Օրէնքների 96-րդ և Դումայի հաստատման 31-րդ յօդուածները, հանդիսանում են պետական Հիմնական Օրէնքների մասնակի վերաքննութիւն։ Լիակատար գիտակցութեամբ, որ Հիմնական Օրէնքները որոշվում են սոսկ ոյժերի ըէալ յարաբերութեամբ, հռետորը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատները հանդէս են գալիս միակ մտադրութեամբ՝ բանալու կառավարութեան երկերեսութիւնը, որ ղեկավարվում է իր գործունէութեան մէջ միայն մերկ բռնութեան սկզբունքով (ծափ. ձախից)։

Բուլատ, կանգ առնելով զանազան ֆրակցիաների զանազան ժամանակ դէպի Հիմնական Օրէնքները ցոյց տուած վերաբերմունքների վրա, յայտնում է, որ աշխատաւորականները իրանց պարտականութիւնն են համարում, իբրև ժողովրդի ներկայացուցիչներ ասել, որ նրանք օգ. 24-ի կանոնների մէջ տեսնում են Հիմնական Օրէնքների մի հսկայ բռնաբարում, որպիսին խստագոյնս կազդէ ժողովրդական շահերի վրա, որոնց աշխատաւոր խմբակը իր պարտականութիւնն է համարել պաշտպանել (ծափ. ձախից)։

Զեկուցանող Շուբինսկին բանաձևելով բոլոր հռետորների ասածները, ջանում է ապացուցանել, որ օգ. 24-ի կանոնները միանգամայն համաձայն են Հիմնական Օրէնքների հետ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մարտի 31-ին, երեկ. ժ. $8^{1}/_{2}$-ին, Կովկասի Փոխարքայի խորհրդի դահլիճում նշանակված է Թիֆլիս քաղաքում բարձր կրթական հաստատութիւն հիմնելու խնդրով զբաղվող յանձնաժողովի նիստը։ Այդ նիստում կը զեկուցվի դրամական հաշիւը, վերջնականապէս կը լուծվի ֆակուլտէտների բացման կարգի և տիպի հարցը, նաև կը քննվի դրամական նոր աղբիւրներ որոնելու խնդիրը։

◆ Շատ տեղերից շարունակ մեզ դիմում են խնդրելով, որ իրանց ուղարկենք «Գեղունի» հրատարակութեան այն համարը, որի հասոյթը յատկացված է կիլիկեան ջարդերից փրկվածներին օգնելու գործին։ Մենք պարտք ենք համարում յայտնել, որ «Գեղունիները» դեռևս չեն ստացված և երբ ստացվեն, այն ժամանակ կը կարգադրվի պատշաճը։

◆ Երէկ, առ. ժ. 10-ից Միխայիլի բանտի հիւանդանոցի բաժնում հրդեհ ծագեց կրակի հետ անզգոյշ վարվելուց։ Կրակը արագութեամբ տարածվեց այն սենեակը, ուր պառկած էին հիւանդ բանտարկեալները, որոնց շտապով մանճակալներով դուրս տարան։ Անմիջապէս եկաւ հրդեհաշէջների խումբը, որի օգնութեամբ կրակը հանգաւ 2 ժամ յետոյ։ Դէպքի տեղը ժամանեցին Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Վատացին, նահանգապետը, ոստիկանապետը և այլ պաշտօնեաներ։ Վնասները դեռ անյայտ են։

◆ Ստացանք Անդրկովկասի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան 1909 թ. հաշիւը։ Ընկերութիւնը այդ տարում ընդհանուր եկամուտ ունեցել է 4172 ր. 26 կ., իսկ ծախք ընդամենը 3426 ր. 14 կ., հաշ. եկշիռը կազմում է 12,045 ր. 44 կ.։ 1910 թ. ընթացքում մուտք սպասվում է 3815 ր., ծախք՝ 3520 րուբլի։ Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է այսօր։

◆ Թիֆլիսի Հայուհեաց Բար. Ընկ. վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ նա շնորհակալութեամբ ստացաւ Մ. Կուլիջանեանից և օր. Կ. Կուլիջանեանից 25-ական րուբլի ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր՝ Եփ. Կուլիջանեանի պսակի փոխարէն՝ յօգուտ Ընկերութեան «ամառային կօլօնիայի»։

◆ Ապրիլի 4-ին Ալշվանգի խանութում կը լինի «Մեղու» ընկերութեան արհեստանոցներում՝ դպրոցական տօների առիթով պատրաստված իրեղէնների էժան վաճառք. ծախվելու են մեծ թւով և վերջին տարազով կարված՝ թէ մեծերի և թէ երեխաների գոգնոցներ, մանկական զգեստներ, մեծերի կօֆտաներ, մատինէներ և այլն։ Բազարում կը ծախվեն և չքաւոր կանանց ձեռագործները։ Ի նկատի ունենալով «Մեղու» ընկերութեան առաջադրած համակրելի նպատակը. ցանկալի էր, որ հասարակութիւնն անուշադիր չը թողնէր այդ էժան վաճառքը։

◆ Թիֆլիս է եկել Ղարաբաղի թեմի նախկին առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախեանը։ Սրբազանը այս օրերս կը մեկնի Էջմիածին։

◆ Փոխարքայի պալատում զինուորական խաղեր, վերջացան մարտի 24-ին։

◆ Երևանի նահանգապետը կովկասեան գլխաւոր իշխանութեանը ներկայացրեց Ալէքսանդրօպօլի քաղաքային ինքնավարութեան խնդիրը. որ կարգադրութիւն լինի որոշելու Ալէքսանդրօպօլ քաղաքի ամարանոցի մասերը՝ թէ ո՞րը պատկանում է քաղաքին, ո՞րը զինուորական իշխանութեանը և, վերջապէս, ո՞րը մասնաւոր անձերի։

◆ Կովկասի Փոխարքան հնարաւոր գտաւ թոյլ տալ Թիֆլիսեցի Գէորգ Մամաջանեանին վերադառնալ Օրէնբուրգի աքսորավայրից և ապրել Կովկասի սահմաններում, բայց ոչ թէ Թիֆլիսում և Թիֆլիսի գաւառում զինուորական դրութեան տևողութեան ամբողջ ժամանակաշրջանում։

◆ Նովօրօսիյսկի հանրապետութեան գործի առիթով մահվան պատժի դատապարտված Մամուլովի մասին հետևեալ տեղեկութիւններն ենք կարդում լրագիրներում։ 1903 թ. Բագւում աւարտելով Կայսր Ալէքսանդր III-ի անուան արական գիմնազիան, Մամուլ անցու, որը բագուեցիներին ծանօթ էր Մամուլով ազգանունով, մտաւ Նովօրօսիյսկի համալսարանը։ 1904 թւին նա կալանաւորվեց Պետրոզավոդսկում սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան զինուորական կազմակերպութեան գործի համար, դատվեց և դատապարտվեց եռամեայ բերդարգելութեան։ 1905 թւի հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ժամանակ Մամուլեանը բանտումն էր, որտեղից նա ազատվեց հոկտեմբերի 22-ի ամնիստիայի շնորհիւ։

1906 թւին 1905 թ.-ի դեկտեմբերի դէպքերից յետոյ Մամուլեանցը բանտարկվում է Բագւի կենտրոնական բանտում, որտեղից էտապով ուղարկվում է Նովօրօսիյսկ։

Ի միջի այլոց, դեռ գիմնազիական նստարանից Մամուլեանցը աչքի էր ընկնում իր գեղեցիկ երաժշտական ընդունակութիւններով և հիանալի տէնոր էր։ Յայտնի յեղափոխական երգը հէնց նրա խօսքերը՝ «կրակէր, զինուոր» նա գրել էր իր բանտային կեանքի օրերից մէկում։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը հայ թատերասէրները կը ներկայացնեն «Տարտիւֆ» պիէսը։

◆ Պրոֆէսօր Գրիգոր Խալաթեանը տարվայ վերջերին մտադիր է բանասիրական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով մեկնել Երուսաղէմ։

◆ Մարտի 25-ին բժշկա-սանիտարական խորհրդի նիստում որոշվեց դադարեցնել Արամեանի անուան հիւանդանոցի առաջին բաժանմունքում հիւանդների ընդունելութիւնը և հրաւիրել քաղաքային կենտրոնական բուժարանի համար մի մասնագէտ-վիրաբոյժ։

◆ Խօսում են, որ նորերս սպանված Աղասի Մելիք-Այվազեանը թողել է 100,000 ր. կարողութիւն, որի մեծ մասը կտակել է իր որդուն։

◆ Թիֆլիս է եկել Բաթումի զինուորական նահանգապետ Ռօմանովսկին։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական թատրոնում առ. ժ. 11-ին Գարբաչեվը կը կարդայ դասախօսութիւն մեղուների կեանքի մասին։

◆ Ինչպէս գրում է «Зак.» օրաթերթը, Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութիւնը դիմել է ամերիկացի յայտնի միլլիարդատէր Րոկֆելլէրին, խնդրելով փոխարինաբար 200 հազար րուբլի տալ Աբասթումանում թոքախտաւորների սանատօրիա կառուցանելու գործի համար։

◆ Մարտի 20-ին Պետերբուրգում Նևայի հրապարակի վրա քացախի էսենցիայով թունաւորվել է հոգեկան հիւանդութիւնների ինստիտուտի ուսանող Սիմէօն Զաք. Յարութիւնեանը՝ 21 տարեկան։

◆ Երէկ պատմեցին, որ Նոր-Բայազէտի գաւ. Գեօքչայում այս օրերս մի կին ծնել է մի երեխայ, որը կէս-մէջքից վերև մարդու կերպարանքով է, իսկ միւս կէսը սողունի կերպարանքով։ Կնոջ ամուսինը, որ աշխատում էր Թիֆլիսում, շտապով կանչվել է հայրենիք։

◆ Թիֆլիս է եկել և իր առաջին ներկայացումը կը տայ մարտի 31-ին Արքունական թատրոնում յայտնի ձեռնածու և մագիկ Րօբերտ Լէնցր կնոջ և աղջկայ հետ։ Ինչպէս յայտնի է, նա իր զարմանալի ճարպիկութեան շնորհիւ և գիտական փորձերով ապշանք է պատճառել բոլորին աշխարհի բոլոր մասերում և համարեա բոլոր պետութիւնների ներկայացուցիչներից ունի գովասանական թղթեր։ Նրա զարմանալի փորձերից մինն էլ տղամարդուց աղջիկ ցոյց տալն է։

◆ Թիֆլիսի նահանգապետը մարտի 24-ին հաստատեց լօտօ խաղալու համար հետևեալ նոր կանոնները, որոնց ոստիկանապետը յանձնեց Թիֆլիսի կլուբների աւագների խորհուրդներին. 1) Թիֆլիսի այն կլուբներում և հասարակական ժողովատեղիներում, ուր տեղի է ունենում լօտօյի խաղը, խաղի համար պէտք է յատկացված լինի առանձին շինութիւն կամ անջատ բնակարան, որին պէտք է հաւանի Թիֆլիսի ոստիկանապետը։ Ծանօթ. Խաղը չէ կարելի ճաշարանում, բայց խաղացողները կարող են պահանջել ուտելիք։ 2) Խաղին չեն կարող մասնակցել և իրաւունք չունեն մտնել այն շինութիւնը, ուր խաղացվում է լօտօն, անչափահասները, աշակերտ-աշակերտուհիները և զինուորները։ 3) Լօտօն պարտաւորապէս պէտք է վերջանայ ոչ ուշ քան գիշերվայ ժ. 2-ը ձմերային շինութեան մէջ և ոչ ուշ՝ քան ժ. 3-ը ամառային շինութիւնների մէջ։ 4) Կարտերի գինը ամեն մի խաղի համար չը պէտք է անցնէ 25 կօպէկից։ 5) Կարտերը տրվում են երկու խաղի համար միանգամից։ 6) Ամեն մի խաղացող կարող է խաղալ միայն երկու կարտերի վրա։ 7) Խաղում հանած կարտերի թիւը 300-ից չը պէտք է անցնի։ 8) Մի գիշերում խաղի թիւը լինելու է 20։ 9) Խաղի համար պէտք է առանձին մեքենական թւահան գործիք լինի։ 10) Մինչև 50 րուբլու տարած գումարից պահվում է $10^{0}/_{0}$, իսկ 50-ից աւելի գումարից պահվում է $20^{0}/_{0}$ կլուբի կամ ժողովարանի օգտին։ 11) Լօտօյի խաղի մասին պարտաւորապէս ցուցակագրվում է առանձին գրքում, ցոյց տալով թէ որքան կարտ է ծախված ամեն մի խաղի համար, ինչպիսի գումար է տարվում, ինչքան է տրվում խաղացողին, ինչքան է պահվում և տանողի ստորագրութիւնը։ 12) Աւագների խորհուրդը պարտաւոր է ամեն միջոց ձեռք առնել ճշդութեամբ կատարելու յիշեալ կանոնները։ Նահանգապետի կամ ոստիկանապետի պահանջով մատեանը ներկայացվում է անմիջապէս՝ ստուգութեան համար։ Հէնց որ առաջին անգամ այս կանոնները խախտվեն, լօտօն արգելվում է։ Ծանօթ. Ներկայ կանոնները իրանց ոյժը պահում են մինչև 1911 թ. յունվարի 1-ը և կարող են մինչ այդ փոփոխութեան ենթարկվել համաձայն փորձի ու գործադրութեան։

◆ Մի շատ հետաքրքրական, ժամանակակից ընտանեկան բարքերը և ամուսնական փոխադարձ հասկացողութիւնները բնորոշող գործ էր քննվում ամսիս 24-ին Թիֆլիսի 4-րդ մասի հաշտարար դատաւորի մօտ։ Սղնախեցի միջնորդ (մակլէր) Եագոր Սիսօեվը, իր աղջկան կնութեան է տալիս ոմն Ա. Կ.-ին, որը իրան անուանում է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտէտի ուսանող։ Վերջում Սիսօեվը ինչ-որ աղբիւրից տեղեկանում է, որ փեսացուն իբր թէ կեղծ ուսանող է։ Այդ հանգամանքը որպէս պատճառ է ծառայում, որ Սիսօեվը դատարան դիմի և յետ պահանջէ «իր արդար աշխատանքով վաստակած» 600 րուբլին, որպիսի գումարը տրված է փեսացուին, որպէս «աւանս», խոշոր «բաժինքի» մի մաս։ Հաշտարար դատաւորը որոշեց պահանջել վերոյիշեալ Ա. Կ.-ից 600 րուբլին, որպիսի գումարը գանձելու համար Սիսօեվին տրվեց կատարողական թերթ։ Նա անշուշտ կը ստանայ իր «կորցրած դրամը», բայց ինչ անուն տալ տգէտ ծնողների և անազնիւ մարդկանց նման վարմունքին, որի շնորհիւ անօգնական աղջկայ անունն է վարկաբեկվում, նայելով նրա վրա որպէս անբան առարկայի և ծախու ապրանքի վրա։ Հասարակական ամօթալի բարքեր...

◆ Գանձակից մեզ հաղորդում են, որ մարտի 23-ին այնտեղ հոգ. կառավարութեան ատեանում յանկարծամահ է եղել Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու երկսեռ դպրոցների հոգաբարձու Յովսէփ Լօրիս-Մելիքեանը։ Հանգուցեալը, որ Թիֆլիսեցի էր, երկար տարիներից ի վեր ծառայում էր Գանձակի երկրաչափական շրջ. վարչութեան մէջ որպէս կրտսեր երկրաչափ։ Երեք տարի է, ինչ հանգուցեալը յիշեալ դպրոցի հոգաբարձուն էր։ Նա թողել է մի կին և 4 անչափահաս երեխաներ անապահով դրութեան մէջ։ Թաղումը կը կայանայ Գանձակում այսօր, մարտի 28-ին։

◆ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութիւնը՝ Աբասթումանում շինվելիք սանատօրիայի համար ստացել է նուէր.—տ. Տ. Ս.-ից 15 ր., Է. Գայդամակինից 3 ր., Իգդիրի ուսումնարանի աշակերտ-աշակերտուհիներից 2 ր. 60 կ., Մ. Մղըրբեանից 15 ր., Ն. Ս.-ից 15 ր., Պ. Վաղչիից 3 ր., Պ. Շաղինեանից 25 ր., Լ. Մօնինից 15 ր., Յ. Գուրջէնբէկեանից 5 ր., Շ. Օհաննէսեանից 25 ր., Է. Մելիօրանսկիից 15 ր.։ Ընդամենը փողով 505 ր. 60 կ., ծախված քարերից 786 ր., ընդամենը 1291 ր. 60 կ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 մարտի

«Հովիւ» շաբաթաթերթի 10-դ համարի մէջ տպված է, որ «Թիֆլիսի Վանքի եկ. Խորէն ք. Խուցեանին, որի դէմ՝ իբրև «ինտրիգան», «խռովարար», բողոքել է միաբանութիւնը, որոշված է տեղափոխել Ջրկինեանց եկեղեցին, ուր մի քահանայի ազատ շտատ կայ»։ Եւ որովհետև այդ լուրը իր մէջ պարունակում է անճիշդ մտքեր, ուստի ես այստեղ, հարկադրված, կամենում եմ ամբողջ գործի էութիւնը պատկերացնել։

1905 թւին Թիֆլիսի կոնսիստորիան, քահանաների նիւթական վիճակը ապահովեցնելու նպատակով, բոլոր եկեղեցիների համար շտատ կազմեց, քահանաների թիւը 60-ից 40-ի իջեցրեց, որով, և՛ բնականաբար, հնար եղաւ հովւող քահանաների ծխականների թիւը աւելացնել։ Ապահովութեան հիմք ընդունվեց քաղաքումս իւրաքանչիւր քահանային երեք հարիւր տուն ծուխ ունենալը։ Այդ ծրագիրը մատուցվեց Էջմիածնի սինօդին, որը և հաստատեց ու պատուիրեց կոնսիստորիային այսուհետև դրանով, առանց շեղվելու, անշուշտ հրահանգվել։ Այդ հրամանագրութեամբ Ջրկինեանց եկեղեցու համար որոշված է միայն մի քահանայ, որովհետև երկու քահանաների ծխերի ընդհանուր թիւը երկու հարիւր քառասունից չէր անցնում։

Ընկերոջս մահից յետոյ երկրորդ քահանայի կարևորութիւնը, բնականաբար, վերացվեց, որի հիման վրա էլ կոնսիստորիան իր վերջին հրամանագրութեամբ հանգուցեալ քահանայի սակաւաթիւ ծխերը ինձ յանձնեց փետրվարին։ Մինչև յիշեալ ամսիս ժամանակաւոր հովւող քահանան հանգուցեալի 86 ծխից միայն 42 տուն հովւեց, որովհետև մնացածները «դրանք դուռ մտող եկող» քահանաների փեշի տակ մտան. 42 տնից էլ, շատ հաւանական է, այսուհետև մեր եկեղեցու ծուխ մնայ առաւելապէս 20 տուն։

Հետևապէս՝ երկրորդ քահանան ինչ ծխի հովւող պէտք է լինի։

Այս բոլորը առաջ բերելով մեզ հետևեալ

եղրակացութիւններն են պատկերանում. 1) Չրկինեանց եկեղեցում չը կայ և չէ էլ կարող լինել երկրորդ ազատ քահանայի շտատ. հետևապէս՝ այդ լուրը այստեղ ամբողջովին իր նշանակութիւնը կորցնում է, որի միակ նպատակն է, ինչպէս երևում է, հասկացնել հոգևոր բարձրագոյն իշխանութեանը՝ այստեղ իրանց չը սիրած քահանայի փոխադրելու. 2) երկրորդ քահանայ նշանակելը հակառակ է սինօդի հրամանին, որի խախտումն երբէք սպասել չէ կարելի վերջինից. 3) նշանակովի քահանայ ուղարկելն էլ դէմ է մեր ծխական «ընտրական սկզբունքներին», որոնց ճիշդ պահպանողն է, և թէ այսուհետև էլ պիտի լինի, մեր բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, երբէք տեղի չը տալով անպատմելի տարաձայնութիւնների, դժգոհութիւնների և իրարանցումների. կը նշանակէ՝ այստեղ էլ «Հովիւի» լուրը իր տակի հողը բոլորովին կորցրեց, ընտրական սկզբունքի դէմ դաւաճանութիւն գործեց և «երևակայական» ծրագիր հոգևոր իշխանութեանը մատնացոյց արեց։

Յիշեալ լուրը պարզ կերպով ցոյց է տալիս, որ Վանքի միաբանութիւնը իր «բողոքով» մի տեսակ տնօրինողի դեր է կամենում կատարել թէ իրանց և թէ միւս եկեղեցիների միաբանների վիճակը որոշելու ասպարէզում, աշխատելով «իրանց ծանրացրած» բեռը թեթևացնել, իսկ միւսներինը՝ աւելի ծանրացնել և անտանելի դարձնել։

Հայր Ռուցեանի գործն է իր պատիւը պաշտպանել, «խռովարար» ու «ինտրիգան» մականուններից մաքուր դուրս գալ և դրանց շինծու լինելը ապացուցանել։

Վերջացնելով իմ խօսքս դառնում եմ իմ պատւական ծխականներիս և ի միամտութիւն նրանց վրդովված սրտերի՝ դրականապէս յայտնում, որ յիշեալ լուրը դիտաւորեալ մտքերի արտադրութիւն է, որի իրագործումը խոհականութեանը և սրբագործված օրէնքին չէ համապատասխանում և երբէք էլ չէ կարող համապատասխանել։

Գրիգորիս աւ.-ք. Երզնկեան

Ախալցխա, 22 մարտի

Թոյլ տուէք լրագրութեանդ միջոցով յայտնելու հրապարակական շնորհակալութիւն Արասթումանի վերընակիչ աղնախեցի եղբարք Միրաքեանցներին, որոնցից Եսայի Միրաքեանցն, ամսիս 14-ին փոխադրելով իր հանգուցեալ եղբօր՝ Աղէքսանդրի մարմինը քաղաքս, պատարագից առաջ ներկայանալով ինձ՝ յայտնեց իր եղբայրների և իր կողմից, որ պատրաստակամ են ի յիշատակ իրանց եղբօր զոհաբերելու 1500 ր. հետևեալ կարգով. 100 րուբ. Էջմիածնի վերաշինութեան, 1000 ր. Ախալցխայում բացվելիք պրոգիմնազիայի և 100-ական ր. աղքատներին, Բարեգ. Ընկ. տեղիս ճիւղին, քաղաքային հիւանդանոցին և Արասթումանի եկեղեցուն։

Փոխանորդ վիճակի՝ Սիոն վարդապետ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թատերասէր Յ. Գ. Տէր-Գրիգորեանին

Թիֆլիս, 27 մարտի

Ամսիս 25-ին, Հայկական Սեկցիայի վարչութեան ժողովին, օգտվելով որ ես հիւանդութեան պատճառով բացակայում եմ, ասել էք, որ իմ ձեռքին եղած տոմսակների հաշիւների մէջ զեղծումներ են լինում։ Համարելով այդ մի զրպարտութիւն, սրանով հրաւիրում եմ ձեզ միջնորդ դատարանի, ուր պահանջում եմ հաստատել ձեր ասածները։

Ընտրելով իմ կողմից դատաւորներ՝ Դաւիթխանեանցին և Ստամբոլցեանին, խնդրում եմ հինգ օրվայ ընթացքում նշանակէք և ձերը։

Թատերասէր՝ Գ. Փիրումեան

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՌԵՖՈՐՄԸ

III*)

ո և օ

Յայտնի է, որ Մեսրոպեան նշանագրերի մէջ չէ եղել օ գիրը, և դա մտել է մեր այբուբենի մէջ շատ յետոյ, իսկ դրա տեղ մեր բոլոր օ հնչիւնների ժամանակ գործ են ածվել ո և աւ, որոնք հնչվել են ինչպէս օ (մերոյ, գործք, երկրորդ, առնելով կամ աւր, Պաւղոս)։ Եթէ ո գիրը հնումը ևս ունենար այն հնչիւնը, ինչ որ այժմ (վօ կամ ւօ, во, vo), այն ժամանակ նա դժուար թէ տեղ գտնէր մեր այբուբենի մէջ, մանաւանդ իբրև ձայնաւոր, քանի որ նա ըստինքեան ոչ միայն ձայնաւոր չէ, այլ նոյնիսկ պարզ գիր էլ չէ, նա այժմ բոլորովին հաւասար է վ կամ ւ բաղաձայնի և օ ձայնաւորի գումարին։ Մի այդպիսի վօ հնչիւն ունեցող գիր մեր նախնիք չէին գործածել այն տեղերում, ուր շատ պարզ լսվում է օ հնչիւնը. աւելին կասենք. ս. Մեսրոպի հանճարը չէր կարող թոյլ տալ իր հրաշալի ստեղծագործութեան—մեր այբուբենի մէջ մի այդպիսի այլանդակութիւն... Աւելի հաւանական է թւում, որ ո գիրը հնումը եղել է մեզ համար օ, և այն բոլոր բառերը, որոնց սկզբում դրըված ո գիրը (ոսկի, ոչխար, որդի) մենք այժմ կարդում ենք ինչպէս վօ, հնումը հնչվել է ինչպէս օ (օսկի, օչխար, օրդի—որոնք այժմ էլ այդ ձևով հնչվում են մեր գիւղացու բերանում)։

Ինչ վերաբերում է աւ-ին, դա կամ եղել է հնումը օ կազմելու մի երկրորդ ձև, ինչպէս այժմ առհասարակ մենք ընդունում ենք, համարելով ա և ւ (ю) ձայնաւորների միութիւնը հաւասար օ-ին (ինչպէս ֆրանսերէնում au=o), կամ թէ գուցէ նոյնչափ հաւանական կարելի է համարել, աւր խօսքը հնումը հնչվել է ինչպէս ավր, որի սեռական հոլովն էլ հեշտութեամբ դարձել է աւուր (ավուր), կամ Պաւղոս անունը հնումը հնչվել է Պավղօս (Павелъ), իսկ ւ-ի ձայնաւոր լինելու դէպքում՝ Պաուղոս (Паулъ)։

Եթէ ընդունենք, որ ո գիրը եղել է օ, այն ժամանակ հասկանալի է դառնում ւ (ю) ձայնաւորի հետ միասին դրանց ու կազմելը, ինչպէս այժմ կազմում են ֆրանսիացիք (ou=ու-ին)։

Սակայն այժմ այլևս հարցերն այնպէս կարևոր չեն. թողնենք, որ դրանց բացատրութիւնը տան մեզ աւելի ձեռնհաս մասնագէտները. Ներկայումս տխուր փաստն այն է, որ մեր այբուբենի մէջ ունենք թէ համաշխարհային օ գիրը (որին այլևս ոչ կարելի է, ոչ էլ ցանկալի է դուրս վռնտել) և նրա կողքին մեր հին ո-ն, որոնք ամենևին չեն հաշտվում միմեանց հետ։

Բանն այն է, որ մինչդեռ օ գիրն ունի ամեն տեղ էլ ամփոփոխ իր միատեսակ ձայնաւոր հնչիւնը, ո-ն, ընդհակառակն, նայած տեղին, ունենում է տարբեր հնչիւններ. այսպէս՝ բառերի սկզբում նա հնչվում է ինչպէս երկձայն վօ (ոտ, Ոսկան, ոմն), մէջ տեղում և վերջում հնչվում է ինչպէս օ) գործով—գործօվ, սիրոյ—սիրօ, ոխակալ—անօխակալ, որդի—հայօրդի և այլն), իսկ յ կիսաձայնի առաջ դրվելիս հնչվում է ինչպէս ու (ոյժ, նոյն, բոյս, զոյգ—որոնք հնչվում են ինչպէս ույժ, նույն, բույս, զույգ)։

Եթէ մի հնչիւնին տալիս ենք մի գիր, բնականաբար՝ մի գրին էլ չենք կարող տալ երեք հնչիւն։ Ուրեմն ո՞րը տալ նրան։

ա) ո գիրն իբրև վօ երկձայն հնչիւնի արտայայտիչ, չէ կարող տեղ ունենալ մեր այբուբենի մէջ. քանի որ այն հնչիւնը, որը կարելի է կազմել երկու աւելի պարզ հընչիւններից (այս դէպքում վ և օ), չէ ներկայացնում առանձին ինքնուրոյնութիւն և կորցնում է իր գոյութեան իրաւունքը։ Եւ իսկապէս ուր կը հասնէինք մենք, եթէ ամեն մի երկձայն հնչիւնի համար մեր այբուբենը ծանրաբեռնէինք մի առանձին նշանագրով։ Այն ժամանակ կարող էինք ջոկ-ջոկ գրեր կազմել բօ, դօ, զօ, խի, չի, նի, լի և այլն և այլն բազմաթիւ երկձայն հնչիւնների համար։ Երեխան շատ անգամ հետևելով բնութեան ձայնին՝ ո հնչիւնի ժամանակ գրում է վօ կամ ւօ. և դա իսկապէս ամենաճիշդն ու բնականն է. նա հէնց այդպէս էլ պարտաւոր է գրել, օրինակ ւօտ և ոչ թէ ոտ, կամ ւօչխար և ոչ թէ ոչխար։ Թէև այսպիսով ո-ով սկսվող մի քանի բառերի գրութիւնը կերկարի, բայց չէ՞ որ ուղղագրութիւնն աւելի հեշտ կը լինի և ընդհանուր կանօնը չի խախտվի։

բ) Ինչ վերաբերում է օ հնչիւնին, այդ դէպքում ո գրելը մի կատարեալ սխալ է։ Եթէ հնումը օ չունենալու պատճառով, կամ ո-ն օ հնչելով մենք գրել ենք գործով, գալով, խորհէր և այլն, այժմ, ընդհակառակն, քանի որ ունենք օ գիրը և ո-ին տալիս ենք վօ հնչիւնը, պարտաւոր ենք բոլոր օ լսված տեղերում գրել անխտիր օ գիրը, այսպէս՝ գործօվ, գալօվ, խօրհէր։

գ) Գալով ու հնչիւնին, այստեղ ո-ն կարող է պէտք գալ։ Քանի որ, ինչպէս ասել ենք (Մշակ № 47), ու հնչիւնի համար մեզ հարկաւոր է առանձին գիր և ո-ն երբեմն հնչվում է ինչպէս ու (յ կիսաձայնի առաջ դրվելիս), արդեօք յարմար չէ՞ լինի այդ անպէտքացած ո գիրը գործ ածել ինչպէս ու առանձին ձայնաւոր։ Սրանով մենք ազատված կը լինէինք ու հնչիւնի համար նոր գիր ստեղծելու դժուարութիւնից։ Այսպէս ո հաւասար ու-ին։

Այսպիսով ո-ի և օ-ի խնդիրը լուծելու ամենահեշտ միջոցն է 1) բոլոր ո լսված տեղերում միշտ գրել ւօ (կամ վօ եթէ կընդունվի վ-ի գործածութիւնը), իսկ օ լսված տեղերում միշտ գրել օ. 2) ո գիրը դուրս ձգել այբուբենի միջից իբրև ոչ-պարզ գիր և դա իբրև կարճ և հեշտ գրվող նշանագիր յատկացնել ու-ին և մտցնել մեր այբուբենի մէջ իբրև առանձին ու (ռուս. у) ձայնաւոր։

Մեզ մնում է մի քանի խօսք ևս ասել Ե-ի և Է-ի ուղղագրութեան մասին։

Լ. Մարկոսեան

---

*) Տես «Մշակ» № 47 և 60.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Մայր երկրէն դուրս ապրող մշեցիներուն եւ Տարօնի կացութեամբ հետաքրքրուողներուն

Մուշ, 13 դեկտեմբեր 1909

Սիրելի հայրենակիցներ.

Սահմանադրութիւնը հաստատուելէն ի վեր այստեղ սկսած է շինարարական մեծ աշխատանք մը. գաղթողները կը վերադառնան, տուն չունեցողները կը վերաշինեն իրենց քայքայեալ բնակարանները, ամեն ոք արտակարգ ճիգ կը թափէ աւելցնելու համար անասուններու թիւը, մշակելի հողի տարածութիւնը՝ վաղեմի ապահով կացութեան հասնելու լուրջ մտադրութեամբ։ Աւելին կայ. օտարութեան մէջ ապրողները հիմա կը ձգտին հայրենի հողի վրայ պատուաստելու այն ամեն նորութիւնները, զորոնք տեսած են լուսաւորուած երկիրներու մէջ։ Կը շինեն նոր ձևով սայլեր, ներս կը մտցնեն նոր տօրքեր, նոր գութաններ, կը շինեն նոր փեթակներ, կը փորձեն նոր-նոր սերմեր, տունկեր, վերջապէս ամեն ինչ կը նորեն, կը լաւցնեն։

Զարթման մեծ ու վճռական շրջանն է, որ կանցնէ տարօնցին, ու եթէ երկիրը խաղաղ մնայ և կառավարութիւնն ալ հոգ տանի այս տառապող ու վշտաչարչար ժողովուրդի ցաւերուն ու ձգտումներուն, յուսալի է, որ 20 տարուան աւերումները պիտի դարմանուին մի քանի տարիներու ընթացքին մէջ։

Շինարարական այս հսկայ գործունէութեան մէջ կարևոր տեղ մը կը գրաւէ կրթական գործը, պահանջը դէպի լուսաւորութիւնն ու գիտութիւնը։ Ամառուընէ սկսեալ տեղւոյս ազգ. մարմինները և գիտակից անհատները, ժողովուրդի համաձայնութեամբ, միահամուռ գործունէութեամբ, որոշած ու սկսած են լուրջ ջանքի, ձգտած են հաստատելու կանոնաւոր ազգ. դպրոցական վարչութիւն, բանալ դպրոցներ Մշոյ և դաշտի գիւղերու մէջ, յուսալով որ նոյնը պիտի կատարուի նաև Թեմիս միւս գաւառներու, Սասնոյ, Խուլպի, Խրանի, Խոյթի, Բռնաշէնի, Մանազկերտու, Բուլանըխայ, Գինջու, Վարդոյի և այլ վայրերու մէջ, ուր տեղ-տեղ, հայոց լեզուն անգամ մոռցուած է. և ճիշդ այդպէս ալ կը կատարուին։

Մինչև այսօր բացուած են 50-է աւելի դպրոցներ, որոնց թիւը օր ըստ օրէ աւելնալու վրայ է։ Աշակերտներու և աշակերտուհիներու թիւը, ներկայիս, 3000-էն պակաս չէ, և կը յուսանք, որ ամիսէ մը 5000-ի հասնի։

Երկու հանգամանք, սակայն, խոչընդոտ կը հանդիսանան կրթական գործի զարգացման. առաջինը սա է, որ տնտեսապէս չափազանց աւերուած կամ շատ ճնշուած շրջաններ—Սասուն, Խոյթ, Բռնաշէն, Խուլպ, Գինջ, Վարդօ, Մանազկերտ—առանց դուրսի աջակցութեան անկարող են ուսուցիչներ վարձատրել, կամ կրթական հաստատութիւններու կարևորութիւնը թոյլ կերպով կըմբռնեն։ Դեռ մի քանի օր առաջ Սասնոյ և Խուլպի գիւղերը դիմելով մեզ կը խնդրէին նպաստել իրենց գէթ դասական պիտոյքներով, և մենք անկարող եղանք այդ քաղցր պարտականութիւնն իսկ կատարելու։ Ասկէ զատ, դպրոց ունեցող գիւղերու մէջ, աղքատութեան պատճառաւ, աշակերտներուն երկու-երրորդը զուրկ է ամենահամեստ պիտոյքներէ, դասագրքերէ, քարետախտակներէ, թղթէ և այլն։ Խորենացի, Դաւիթ Անյաղթ, Ղազար Փարպեցի, Ստեփանոս Ասողիկեան պատմագիրներու և Թարգմանիչներու գերեզմաններուն կից գտնուող Առաքելոց-Թարգմանչաց վանքի որբանոցին մէջ պատսպարուած Տարօն-Սասունի նահատակ հերոսներու տղաքները ոչ միայն գրքեր չունին, այլ նաև փոխնորդէ իսկ զուրկ են... Այս տխուր պարագան կրկնակի դժուարութիւն կը յարուցանէ ուսուցիչներու գործին առջև և կը հարկադրէ մատաղ երախաներուն, որ մէկ տարուան սորվելիքը տարիներու ընթացքին մէջ առնեն։

Երկրորդ դժուարութիւնը կը կայանայ և քիչ շատ պատրաստուած դասատուներ չունենալուն մէջ։ Թէև այս չարիքը ընդհանուր է ամբողջ հայութեան, սակայն զգալի է մանաւանդ Տարօնի մէջ, ուր մինչև այսօր եղած չէ ոչ մէկ բարեկարգուած կրթական հաստատութիւն։ Հետևանքը սա է, որ դպրոցներու մէջ դասաւանդութիւն ընողներու ճնշող մեծամասնութիւնը կեցած չէ իր կոչման բարձրութեան վրայ։ Չնայելով ուսուցիչներու աշխատասիրութեան և սրտանց վերաբերման՝ հանդէպ իրենց ստանձնած գործին, անոնք անկարող են գոհացուցիչ կերպով կատարելու իրենց՝ ուսուցչի պարտականութիւնները։ Սորված՝ ճնշող ռէժիմի տակ, վանքերու տիրացուներու քով, չկարդացած քանի մը կտոր գիրք անգամ, այդ ուսուցիչները հարկադրուած են ընելու ինչ որ սորված են։

Ձեռնհաս ուսուցիչներու պակասը լրացնելու համար կանոնաւոր վարժապետանոց մը ունենալու միջոցներուն ձեռնարկուած է, ուր, հաւանականաբար, գիւղատնտեսական բաժանումներ ևս պիտի ըլլան։ Գիւղերու մէջ կը տրուին փորձառական դասեր, և կը յուսանք նոյն իսկ յառաջիկային կազմակերպել մանկավարժական դասընթացքներ։ Սակայն սա կը վերաբերի ապագային. մենք ստիպուած ենք խորհիլ այսօրուան մասին, լրացնելու համար եղած պակասը հնարաւոր ջանքով և ձեռքի տակ գտնուած միջոցներով։ Մեզ կը թուի թէ ուսուցիչներու այդ զգալի պակասը, առանց օր կորսնցնելու, կարելի է լրացնել ուսուցչական, դպրոցական գրադարաններ հաստատելով, ժողովուրդի ձեռքը տալով մեծ քանակութեամբ ընթերցանութեան գրքեր, լրագիրներ, պատկերներ և այլն։ Նոր գրքերը ոչ միայն կը լայնցնեն ուսուցիչներու մտաւոր հորիզոնը, այլ և ժողովրդական լայն խաւերուն մէջ ընթերցանութեան սէր ծնեցնելով կը նպաստեն անոր կրթութեանն ու յառաջդիմութեանը, ամենալայն ու առողջ մտքով...։

Տարաբաղդաբար 20 տարուան քստմնելի աւերումները այն աստիճան ոտաքանց ըրած են երկիրը, որ կրթական մարմինը կըցած չէ իր տրամադրութեան տակ ունենալ միջոցներ, որոնք հնարաւորութիւն կուտան գէթ ամենահամեստ չափով գոհացում տալ վերոյիշեալ պահանջներուն, հայ անմեղ պզտիկներու ամենատարրական պիտոյքները հոգալու միջոցներէն, ուր կը մնայ գաւառներու օժանդակութեան կամ գրադարաններու հաստատութեան հարցը, գոնէ կեդրոնական գիւղերու դպրոցներուն մէջ։

Ահա այս կարևոր գործի համար, հայրենակիցներ, կը խնդրենք ձեր աջակցութիւնը։ Օգնեցէք շրջանիս լուսաւորութեան գործին ինչով և որչափ որ կարող էք։ Գիտական, գրական գրքերը, թերթերը, պատկերները, քարտէզները, նկարները, բնագիտական, մանկապարտէզի գործիքներ,—այս ամենը, որ այդտեղ ձեզի համար շատ քիչ արժէք ունին, այստեղ կունենան իրենց շօշափելի օգուտը։ Տարօնի կրթական գործին աւելի կանոնաւոր ընթացք մը տալու համար փափագելի է, որ համակրողները կազմեն իրենց մէջ յատուկ միութիւններ ու ընկերակցութիւններ (հայրենակցական կամ այլ հողի վրայ)։ Կառաջարկէինք, նոյնպէս յանուն Տարօնի կրթական վերածնութեան, Նոր-Տարուան, Ծննդեան, Բարեկենդանի, Զատկի և այլն տօներու առթիւ չը գլանալ կազմել հանդէսներ, ընել հանգանակութիւններ, աւելի ու իրական զարկ մը տալու երբեմն փարթամ, իսկ այժմ քայքայուն օջախներու վերաշինման գործին։ Յատկապէս կը խնդրուի հեռաւոր տարօնցիներէ, որ գիւղատնտեսական, այգեգործական և այլ նորութիւններ հաղորդելով սերմեր և այլ իրեր ղրկելով նպաստեն մայր երկրի յառաջդիմութեան՝ գիւղատնտեսական ու արհեստակցական հողի վրայ։

Օգնեցէք, զի Սահակ-Մեսրոպներու, Խորենացի-Անյաղթներու, Մամիկոնեաններու, Եղիշէ-Մհերներու, Սեպուհներու, Հրայր-Գէորգներու հայրենիքը չմնայ և չպիտի մնայ խաւար ու աւերակ։ Այդ դիւցազն անձնուէրներու հոգիները մեզ՝ իրենց վերջամնացորդներու միահամուռ ջանքերուն կը նային սրտայոյզ...։

Յուսով ենք, որ մեր ձգտումները դատապարտուած չեն ապարդիւն մնալու, և տեղացի ազգաբնակութեան ուժերու, դրսեցիներու աջակցութեան շնորհիւ պատմական Տարօնը կը վերակենդանանայ և կը կանգնի իր կոչման բարձրութեան վրայ։

Ի դիմաց ուսումն. խորհրդոյ Տարօնի
Ընդհ. տեսուչ Տարօնոյ՝
Ս. Զաւարեան
Վ. ատենապետ՝ Յ. Զաքարեան, ատենադպիր՝ Գ. Ս. Մարգպետունի

Ծ ա ն օ թ.—Նպաստները «ընդհանրապէս Տարօնի թէ ուրիշ շրջանի գիւղերու համար» կարելի է ղրկել հետևեալ հասցէներով.

1) Քաղաք. ժողովի ատենապետ Նազարէթ էֆ. Քէչիշեան։
2) Տնտեսական խորհրդոյ գանձապահ Ստեփան աղա Քէնտէրեան։
3) Ուսումն. խորհրդոյ ատենադպիր Գէորգ էֆ. Մարգպետունի։

Գրքերը, լրագիրները, պատկերները նախընտրելի է ուղղել ուղղակի դպրոցներու տեսչութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Աղէքսանդրեան այգու մօտ.
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան ժամը $9^{1}/_{2}$-ից մինչև 5-ը ցերեկվայ։
ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ԲՈԺՕՎՍԿԻՅ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։
ԳՐԵՅՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր 2—3 ժ.։
ՄՈՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.։
ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։
ՆՕՎԻՑԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը։
ՊԱՎԼՕՑԿԻՅ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։
ՏԵՐԱԶԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԽՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11^{1}/_{2}$—$12^{1}/_{2}$ ժ. ցեր.։
ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $9^{1}/_{2}$—$10^{1}/_{2}$ ժ. առ.։
ՓՈՆԴՈԵՎ—ջղային հիւ. և էլեկտրոտեքապիա. ամեն օր, ժամը 4—5-ը։
Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, ստամոքսի և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 991. 100—26

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Յ. ՔՐԻՍՏԱՓՈՐԵԱՆԻ
ՁՈՒԱՐՃԱԼԻ ԶՐՕՍԱՐԱՆ
ԿԱՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ
ազգ. առածներով, հանելուկներով, ընդարձակ երազահանով եւ այլն։ Պարունակում է եւ էփիմէրտէ
ԲԱՂԿԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ, 360 էջ։
Սոյն հրատարակութիւնն անմեղ և ուրախ ժամանցի համար է և արժէ որ իւրաքանչիւր հայ տուն ունենայ իր սեղանի վրա։
Պահեստը Թիֆլիսում հրատարակչի մօտ կամ Կենտրոնական գրավաճառանոցում։
ԳԻՆԸ—Թղթակազմ՝ 1 ր. 30 կ., կազմված՝ 1 ր. 40 կ.։
(Կ.) 350. 5—1

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են հետեւեալ նոր գրքերը.
Տէր-Յովհաննիսեան.—Ծաղրածու, (ժամանակակից կեանքից վերցրած ծիծաղաշարժ անեկդոտների ընդարձակ ժողովածու) 50 կ.։ Տէր-Գրիգորեան.—Գայլ Վահան 10 կ.։ Եփրիկեան.—«Պատանի» (գրական ժողովածու) 15 կ.։ Լէօ.—Մելիքի աղջիկը 2 ր.։ Թումանեան.—Բանաստեղծութիւններ 2 ր.։ Աշըղ-Ջիւանի.—Հէքիաթներ.
» Աշըղ-Ղարիբ 40 կ.։
» Քեարամ և Ասլի 60 կ.։
» Արշալոյս և Լուսաբեր 30 կ.։
» Շահ Իսմայիլի հէքիաթը 30 կ.։
» Մելիք-Շահի հէքիաթը 30 կ.։
Րաֆֆի.—Ջահրումար 2 ր., Թիւրքահայք 50 կ.։ Աղէք. Մխիթարեան.—Զուարճալի զրօսարան կամ (էփեմէրտէ) 1 ր. 30 կ.։
Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ.
Ռուսաստանի սահմաններում օտար քաղաքներից պատուիրողները պէտք է իրանց հասցէն պարզ և ճիշդ ռուսերէն գրեն և գրքերի արժէքը լիովին փոխադրեն։ 10 րուբլու և աւելի պահանջողները կարող են ուղարկել մի երրորդականը։
351. 1—1

ՄՈԴԱՆԵՐԻ
ԹԵՐԹԵՐ
եւ ՋԵՒԵՐ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
Օ. ՋՈՒԲԲԵՐՏ եւ Ընկ.
ՄՈՍԿՎԱ
Պետրովսկի պասսաժ, № 456.
ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԿԱՏԱԼՕԳԸ ՁՐԻ.
(Հ. Կ.) (M. 88787) 279. 6—6

Տպագրվում է եւ շուտով լոյս կը տեսնի
ՏՂԱՄԱՐԴԻ
ՏՐԻՊԵՐԸ (ՍՈՒՍՈՒՆԱԿ)
ԵՒ ՆՐԱ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
Պատկերազարդ։ Կազմեց մէդիկ.-ֆէլդշ. ԵՍԱՅԵԱՆ։ Գինը 20 կ.։ Պարունակում է մանրամասն խորհուրդներ, դեղեր և նկարներ։ Կումարով գնողներն ու գրավաճառները նախօրօք թող պատուիրեն «Գուտտենբերգ» գրախանութին, Թիֆլիս։ Քանակի և զեղչի մասին նամակով։
(Ե.Հ.Կ.) 334. 3—3

ԱՅԼԵՒՍ ՉԸ ԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ
Եթէ Դուք իսկապէս կամենում էք բժշկվել սիֆիլիսից, տրիպպէրից, շանկրից, բէլից, սեռակ. թուլութիւնից, չերքերից և կամ Ձեր առողջութիւնը քայքայված է օնանիզմից—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան տղամարդ. և կանանց սեռակ. անդամների գաղտնի հիւանդութիւնների» անունով գիրքը, բազմաթիւ նկարներով և գեղատոմսերով, բաղկացած 250 էջից։ Գինը վերադիր վճարով և ճանապարհած. 1 ր. 50 կ.։ «Ժողովրդական բժշկարան», ձեռնարկ առանց բժշկի օգնութեան բոլոր հիւանդութիւններից բժշկվելու համար, (բացի գաղտնի հիւանդութ.), մեծերի և երեխաների համար, բազմաթիւ գեղատոմսերով, էջ մօտ 250, գինը՝ վերադիր վճար. և ճանապարհած.—1 ր. 50 կ.։ Երկու գրքերը միասին—2 ր. 60 կ. (կարելի է նամականիշներով)։ «Նախազգուշ. բժշկարան ամուսինների համար», էջ 135, գինը 1 ր. 25 կ.։ Միակ պահեստը С.-Петербургъ, Офицерская, 50—224. Ф. Словакъ.
(14, 28) (П. 26242) 265. 2—2

300 ՌՈՒԲ. ՊԱՐԳԵՒ
կը ստանայ իւրաքանչիւրը, ով կապացուցէ, որ մեր առաջարկած մինչեւ օրս չեղած գնով գրամմոֆոնը՝ 12 պլաստինկաներով եւ 1000 ասեղներով չարժէ նշանակված գինը—ընդամենը 13 ր. 85 կ. ճանապարհածախսով։
Պահանջեցէք եւ կը համոզվէք!
Ձեղ և ամուր գրամմոֆոն «ՍԱԼՕՆ-ԿՕՆՑԵՐՏ», նորագոյն տիպի, «ՄՕՆԱՐԽ» յայտնի մարկայով, թանգարժէք գրամմոֆոն. չը զանազանվող և գերազանց թէ ոյժի և թէ ձայնի կողմից։ Ձայնի աչքի ընկնող գեղեցկութիւն։ Վերցված է ամեն տեսակ թշշոց։ Լարումը կողքից, արագ և դանդաղ նուագելու րէգուլեատորով։ Գունաւոր բուլոր «ԼՕՏՕՍ», մէմբրանը կրկնակի համերգային «ՍԻՄՓՕՆԻՕՆ»։ Գրամ. արկղի մեծութ. 20×20×10 սանտիմետր։ Գունաւոր խողովակի չափը 30×40 սանտ.։ Պատուէրները կատարվում են վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Բոլոր գումարը սկզբից ստանալուց՝ ուղարկում ենք 4 պլաստինկա ՁՐԻ։ Խնդրում ենք հասցէագրել. Единств. Представ. Французск. фабрики граммофоновъ К-о «БЕНЪ», Варшава, 105—293. «Գրանդ-էկստրա» համերգ. պլաստինկաների մեծութիւնը $25^{1}/_{2}$ սանտիմետր։ Գինը 75 կոպ. և 1 ռուբ. 25 կ.։ Սիբիր ճանապարհածախսը հաշվում է 1 ր. 75 կ.
ՅԱՆԿԱՑԱԾ ԴԵՊՔՈՒՄ [illegible] ենք մեզ [illegible] հակառ. նամակներ ուղարկած անձերին։
[illegible]
(Կ.) (B. 17225) 266. 2—2



Типографія „Экономія" Большая Ванкская № 3.